



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

26 մայիսի 2020 թվական

4-րդ նստաշրջանի 4-րդ նիստ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 15.40

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են
ավագանու 21 անդամ՝

Իզաբելլա Աբգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Մեսրոպ Պապիկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Գայանե Մելքոն Մելքոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Գայանե Եղիազարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Գայանե Վարդանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լյուդմիլա Սարգսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լիլիթ Կիրակոսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Նուարդ Վարդանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Աննա Ջավախյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Գրիգորի Երիցյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Սիփան Ասատրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Էոնեստ Ավանեսով՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Լևոն Ջաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Իզաբելլա Աբգարյան, խնդրեմ:

Իզաբելլա Աբգարյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Երկու հարց ունեմ, քանի որ երկուսն էլ վերաբերում են ճարտարապետական բլոկին, միասին կհնչեցնեմ: Նիստի ընդմիջման ժամանակ ինձ զանգահարեցին Շիրազի փողոցի բնակիչներից և մտահոգություն հայտնեցին. այն տարածքը, որի հողի օգտագործման նշանակությունն ավագանու որոշմամբ փոխվել է, այդտեղ շենք է կառուցվելու: Ես հավաստիացրեցի, որ, ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի, այդտեղ կառուցվելու է երկհարկանի տուն, սակայն բնակիչները կասկած ունեն, որ կարող է շենք կառուցվել: Հնարավոր է արդյոք նման բան, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը հետագայում փոխվի, փոխարենը տրվի բարձրահարկ շենք կառուցելու համար:

Երկրորդ հարցս կրկին ճարտարապետության ոլորտից է: Երևանում փիրուզագույն շենք է կառուցվել, որն առիթ դարձավ լայն քննարկումների: Կարող էր արդյոք քաղաքապետարանն արգելել շենքը փիրուզագույն ներկել, և որքան է ընդունելի վարդագույն քաղաքում մեկ փիրուզագույն շենք ունենալը: Կխնդրեմ պարզաբանել այդ շենքի պատմությունը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Մեղոյանը:

Անդրանիկ Մեղոյան

-Անդրադառնամ առաջին հարցին: Ասեմ, որ նպատակային նշանակության փոփոխության մասին Երևանի քաղաքապետի որոշմանը կից տրամադրվում է նախագծման թույլտվություն, որով տարանջատվում են չափորոշիչներ՝ դա բնակելի տուն է, թե՛ բնակելի

շենք: Այս պահին ես չեմ մտաբերում Շիրազի փողոցի տվյալ հասցեն, բայց նախագծման թույլտվություն պետք է լինի և, բնականաբար, եթե ես չեմ մտաբերում, նշանակում է դա բնակելի տուն է լինելու:

Անդրադառնամ երկրորդ հարցին՝ կապված փիրուզագույն շենքի հետ: Խնդիրը հետևյալն էր. եթե չեմ սխալվում Մանանդյան փողոցի 43/4 հասցեում գործող արտադրական շինությունների վերակառուցման հարցն էր: Այնտեղ գործող արտադրական սրճարան է եղել, կից՝ արտադրական մասնաշենքով, այնուհետև տրամադրվել է նախագծման թույլտվություն՝ առկա շինությունների վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման համար: Դրանից հետո համապատասխան փորձաքննություններով նախագիծը ներկայացվել է Երևանի քաղաքապետարան, ինչի արդյունքում համաձայնեցվել է:

Նախագծում շենքի գունավորման մասին հիշատակում չի եղել: Կցանկանամ մեջ բերել մի կարևոր հանգամանք. հաշվի առնելով, որ շենքը քաղաքի կենտրոնում չի, որտեղ կա որոշակի պատմական գոտի, որոշակի ձևավորված միջավայր, այլ գտնվում է Շենգավիթ վարչական շրջանի ոչ կենտրոնական տարածքում, մենք գունային խստություն չսահմանեցինք այդ նախագծում: Շեշտեմ, որ նախագծում գույնի վերաբերյալ որևէ նշում չի եղել, և այդպիսի պահանջ մենք չենք ունեցել՝ այն պարտադրելու համար:

Իզաբելլա Աբգարյան

-Շնորհակալություն, ինձ համար անթույլատրելի է նշել, որ շենքը Շենգավիթ վարչական շրջանում էր, դրա համար թույլ տվեցինք: Մեր քաղաքական թիմը հայտարարել է, որ քաղաքի ծայրամասերը մեզ համար նույնքան կարևոր են և նույնքան ուշադրության կենտրոնում են, որքան կենտրոնը: Այնպես որ նման հարցերում խնդրում եմ մեր դիրքորոշումն անպայման նկատի ունենաք, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

Արմեն Ներսիսյան

-Պարոն քաղաքապետ, բազմիցս ուսումնասիրել եմ տարբեր երկրների օրինակները. Իրանի Իսլամական Հանրապետությունում պատերազմի մասնակիցներին ամեն տարի խրախուսում են, անգամ նախկինում գերեվարված մարդկանց որպես նվիրատվություն տրամադրվում է հողատարածք կամ գումար:

Հաշվի առնելով, որ մարդիկ ապրում են վարձով և գտնվում են սոցիալական ծանր իրավիճակում, արդյոք կա ծրագիր, քաղաքապետարանի կողմից որպես նվիրատվություն

հողատարածք տրամադրել ազատամարտիկների և գոհված ազատամարտիկների ընտանիքներին:

Հայկ Մարության

-Ձեր կողմից նշված այդ գործառույթը՝ նվիրատվություն է, որը գտնվում է Երևանի ավագանու լիազորությունների շրջանակում: Քաղաքապետարանը նման գործառույթ չունի: Նման ծրագիր իրականացնելու ցանկության դեպքում, Դուք կարող եք ծրագիրը ներկայացնել Երևանի ավագանու անդամներին, որպեսզի ընդունվի ավագանու որոշում:

Արմեն Ներսիսյան

-Պարոն քաղաքապետ, ինձ դիմել են վարձով ապրող ազատամարտիկներ, ես այս հարցը որպես նախագիծ կներկայացնեմ:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Հարցս վերաբերում է կանաչապատման, բակային տարածքներում ծառերի էտման և դրանք դեղերով մշակելու աշխատանքներին: Նախկինում այդ աշխատանքներն իրականացվում էին վարչական շրջանների կանաչապատման ընկերությունների կողմից: Այս ժամանակահատվածը որդերի և միջատների շրջան է, և մարդիկ ահազանգում են, որ բակային տարածքներում էտման և ծառերը դեղերով մշակելու աշխատանքներ չեն կատարվել: Գիտեմ, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գործառույթների մեջ չեն մտնում այդ աշխատանքները. ստացվում է, որ ոչ մի կառույցի գործառույթի մեջ չի մտնում այդ աշխատանքների իրականացումը: Ի՞նչ լուծում է տրվելու այս հարցին:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Նախորդ նիստին ասել եմ, որ մեր ռեսուրսներն ավելի շատ են քան նախկինում, սակայն այս վարակի հետ կապված խնդիր ունեինք: Հաշվի առնելով, որ աշխատակիցները մեծահասակ են և չէին կարողանում աշխատանքներին մասնակցել: Այս պահի դրությամբ աշխատակիցները գրեթե 80%-ով մոբիլիզացված են: Քննարկում ենք ունեցել, որ բակային տարածքներում ևս կատարվեն այս ժամանակահատվածի համար անհրաժեշտ աշխատանքները: Էտման աշխատանքները կկատարվեն աշնանը, իսկ չորացած ճյուղերի կտրման և սրսկման աշխատանքները կիրականացվեն «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից այն ծավալով, որ հնարավորություն

կունենանք: Վստահեցնում եմ, որ ծավալը հիմա ավելի շատ է, քան նախկինում, այսինքն 100%-ով կատարյալ արդյունք չենք ունենա: Այնուամենայնիվ, բակային տարածքներում ևս այդ աշխատանքները կիրականացվեն:

Անի Խաչատրյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ: Մեկ շաբաթ է արդեն չի աշխատում «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ը՝ դեղորայք չունենալու պատճառով: Խոսել եմ նաև տնօրենի հետ, ով հաստատել է ՀՈԱԿ-ի չաշխատելու փաստը՝ տենդերի հետ կապված մրցույթի խնդիր է եղել, ուշացել է: Մեկ շաբաթ ՀՈԱԿ-ի չաշխատելն ինչ վնասներ կբերի քաղաքին՝ թափառող կենդանիներ չվնասազերծելու առումով: Ինձ ասացին, որ մյուս շաբաթ տեղափոխվելու են այլ հիմնարկ, դա է նաև պատճառը: Ինչքա՞ն կտևի դա:

Տնօրենն ասաց նաև, որ աշխատակիցները կաշխատեն շաբաթ, կիրակի և չաշխատած օրերը կլրացվեն: Արդյոք աշխատակիցները շաբաթ և կիրակի աշխատելու համար հավելյալ կվճարվեն:

Հայկ Մարություն

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Դուք պատճառն ավելի մանրամասն ներկայացրեցիք, քան ես կարող էի: Բնականաբար, եթե մրցույթի հետ կապված եղել են խնդիրներ և մատակարարը դեղը չի մատակարարել, չէինք կարող այլ ճանապարհով դեղամիջոց ձեռք բերել և իրականացնել ստերջացման աշխատանքներ: Այն աշխատակիցները, ովքեր այս շրջանում չեն աշխատել, պատրաստակամ են գալ և հավելյալ օրեր աշխատել:

Ցավոք սրտի, այլ գործիքակազմ, քան օրինական ճանապարհով դեղեր ձեռք բերելը, մենք չունենք: Ստիպված ենք շարժվել այն նախանշած սկզբունքներով, որը որդեգրել ենք և սպասել մատակարարի մրցույթի արդյունքում ժամանակին դեղերի մատակարարմանը:

Ինչ վերաբերում է նոր տարածք տեղափոխվելու հարցին, գիտեք, հիմա այնտեղ մի շարք աշխատանքներ են իրականացվում, որոշակի գույք արդեն տեղափոխված է: Այնտեղ այս պահին հիմնականում դեղերի պահման վայրի հետ կապված աշխատանքներ են իրականացվում, որովհետև դեղամիջոցների մեջ կան հոգեմետ դեղեր, որոնց համար պահպանության առանձին ռեժիմ է անհրաժեշտ: Հիմա որոշակի աշխատանքներ ենք իրականացնում այդ առումով: Վստահեցնում եմ, որ մոտ ժամանակներում հիմնական աշխատող կազմը, ոչ ադմինիստրատիվ, կտեղափոխվի: Բժշկական սեղանները և բժշկական այլ պարագաներն արդեն տեղափոխվել են:

Հայկ Մարության

-Ի՞նչ պատճառով չի կայացել մրցույթը:

Տիգրան Վիրաբյան

-Չեմ կարող կոնկրետ ասել ինչն էր խնդիրը, կարծում եմ գնումների վարչությունն ավելի հստակ կարող է պատասխանել այդ հարցին: Այնուամենայնիվ, այսօր ունենք մատակարարման ժամկետի խնդիր և մատակարարող կողմն ասում է, որ արդարացված է այդ փաստը, որ կա մատակարարման անհնարինություն, որն արագ կվերականգնվի:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյան, խնդրեմ:

Մեսրոպ Պապիկյան

-Պարոն քաղաքապետ, ես ուզում եմ տեղեկություն ստանալ ԻՄ ՔԱՅԼԸ դաշինքի նախընտրական ծրագրի 9-րդ կետի մասին, այն է՝ մասնագիտական և հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարությունը: «City development start» էջի հետ կապված ինչ-որ բան կատարվե՞լ է կամ կատարվելու՞ է:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժ/պ Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Կցանկանայի ավելի մանրամասն իմանալ, քանի որ մի քանի ծրագրեր կան, որոնց շուրջ խոսվել էր: Դրանցից մի քանիսը ընթացիկ փուլերում են, մի քանիսը դեռևս չեն սկսվել: Մասնավորապես, մի քանի ծրագրեր կան, որոնց իրականացման սկզբնական աշխատանքներին չեմ մասնակցել: Խոսքն Արշակունյաց-Իսակով պողոտաների ճանապարհային հատվածի մասին է, կարող էին մետրոյին առնչվող հարցեր լինել: Կխնդրեի քաղաքաշինական խոշոր ծրագրերից մոտավոր ուղղություն նշվեր: Քաղաքի ծրագրով, որպես ռազմավարական ծրագիր, կարծում եմ այդ երկու հարցերն էին, որոնք ստրատեգիական նշանակություն ունեին:

Խոսվել էր նաև բազմաբնակարան շենքերի միասնական մանսարդային հարկերի վերաբերյալ օրենսդրական որոշակի փոփոխությունների մասին: Կցանկանայի մի փոքր հստակեցվեր ինչ ուղղվածության մասին է, որովհետև ես անձամբ, թվարկված երկու հարցերից բացի, խոշոր ռազմավարական այլ ծրագիր չեմ մտաբերում:

Մեսրոպ Պապիկյան

-Պարոն քաղաքապետ, ես առաջարկում եմ քննարկումներ սկսել այս հարցի շուրջ: Աշխարհի զարգացած քաղաքներում, քաղաքի կառավարման մեջ նմանատիպ գործընթացներ կան: Կարող ենք ներգրավել նաև մասնավոր անձանց, խորհրդատվություններ ստանալ և աշխատանքն սկսել:

Հայկ Մարության

-Շատ լավ, շնորհակալություն: Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրեմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Թբիլիսիի քաղաքապետը ֆեյսբուքյան իր հարթակում երկու ամիս առաջ ներկայացրեց լուսանկարներ, թե ինչպես է ախտահանվում Թբիլիսին: Ցավոք, պետք է արձանագրեմ, որ իմ որոշ գործընկերներ այդ ամենը ծաղրեցին:

Երևան քաղաքում ախտահանման ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են իրականացվում: Մեզ մոտ հակահամաճարակային խնդիրներն իսկապես աղետալի է: Ի համեմատություն Վրաստանի՝ այստեղ թվերը, ցավոք, խոսուն են: Երևան քաղաքում որքանով տեղյակ եմ փողոցների լվացման աշխատանքները շատ ցածր մակարդակի վրա է, իսկ ախտահանման մասին խոսելը բոլորովին այլ պատմություն է: Կարծես, թե մենք այդ հնարավորությունները չունենք: Խնդրում եմ այս մասով պարզաբանել և ընթացիկ աշխատանքների մասին տեղեկատվություն տրամադրել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Մենք ի սկզբանե շատ լուրջ ենք մոտեցել խնդրի լուծմանը: Նույնիսկ ծաղրեցին և տարբեր մեկնաբանություններ գրեցին, երբ մինչև արտակարգ դրության հայտարարելը, սկսեցինք «Քլինինգ սերվիս» ընկերության օգնությամբ ախտահանել «Կ. Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ընկերության վագոնները և «Երևանտրանս» ընկերության տրանսպորտային միջոցները: Դեռ նյութեր և գործիքներ չկար և արտակարգ դրություն չէր հայտարարվել, բայց քաղաքապետի հանձնարարությամբ կատարվել են այդ աշխատանքները:

Նախքան արտակարգ դրության հայտարարումը, քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման վարչության աշխատակիցների հետ համատեղ կազմակերպվել էր շրջիկ խումբ: Խումբն առևտրի և սպասարկման կետերի տնօրինության

իրագրելու և հորդորում էր հնարավորինս ախտահանել այն մակերեսները, որտեղ շփումն առավել շատ է:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի ընդհանուր ախտահանման գաղափարին, ես գերծեմ մնացել որևէ մեկնաբանություն անել: Այս պահի դրությամբ ոչ թե հնարավորության հարցն է, այլ աշխատանքի արդյունավետությունն է, որը կատարվել է Թբիլիսի քաղաքում և Չինաստանի մեկ-երկու քաղաքում: Նույն քանակի վարակի դեպքեր գրանցվել են նաև եվրոպական մի շարք երկրներում և չնայած, որ փողոցները լվանալու աշխատանքները էֆեկտիվ տեսք ունեն, բայց այդ գաղափարի արդյունավետությունը դեռ ապացուցված չէ: Այսինքն դեռ ապացուցված չէ, որ այդ աշխատանքների իրականացումը կնպաստի վարակի կտրուկ նվազեցմանը, սակայն չեմ կարող պնդել նաև հակառակը:

Երևանի քաղաքապետարանի կողմից ախտահանումը կատարվում է առարկայական, դա տրանսպորտն է՝ և՛ քաղաքապետարանի ենթակայության գործող և՛ մասնավոր: Ի դեպ, մասնավորի դեպքում ծախսերը ևս հոգում է քաղաքապետարանը: Աշխատանքները կատարվում են ախտահանում իրականացնող բարձր մասնագիտական փորձ և որակավորում ունեցող ընկերության կողմից, որն ունի անհրաժեշտ գործիքներ և նյութեր: Ախտահանման աշխատանքները կատարվում են օրական առնվազն երկու անգամ: Հետևում ենք ախտահանման գործընթացին, հերթական երթուղու ավարտից հետո վարորդի կամ սպասարկող անձնակազմի կողմից մաքրվում են տրանսպորտային միջոցների բռնակները և նստարանները:

Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի և համատիրությունների հետ համատեղ ախտահանվում են բազմաբնակարան շենքերի մուտքերը: Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանի հետ համատեղ, ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ցուցումների համապատասխան, կազմակերպվել է մանկապարտեզներում ախտահանման աշխատանքները: Ախտահանվում է նաև Երևանի քաղաքապետարանի վարչական շենքը: Այսինքն կատարվում է այն աշխատանքները, ինչն օգտակար է:

Թբիլիսի քաղաքի մաքրման անալոգիան, որին ականատես եղանք, այստեղ չի արվել և դրա ցուցումը չկա: Նշեմ, որ այդ ամենի կարևորությունը և ՕԳԳ-ի չափը չկա: Չնայած, մաքրման աշխատանքների այդ տարբերակն ունի էֆեկտիվ տեսք: Աշխատանքները հիմնականում կատարվում են պարետատան և մասնագիտական խմբի կողմից տրված ցուցումների հիման վրա, քանի որ նրանք կատարում են ուսումնասիրություններ և վարում քաղաքականությունը, իսկ մենք կիրառում ենք:

Հոփսիմե Առաքելյան

-Պարոն Հարությունյան, նշեցիք, որ ախտահանման այդ տարբերակն էֆեկտիվ չէ և նաև պնդում եք հակառակը: Նույնը կարելի է պնդել նաև դիմակ օգտագործելու համար: Այսինքն, դեռ ապացուցված չէ արդյոք դիմակի օգտագործումը լավ է, թե ոչ:

Հայկ Մարության

-Ապացուցված է:

Հոփսիմե Առաքելյան

-Պարոն քաղաքապետ, միանշանակ ապացուցված չէ:

Մի ախտահանեք, բայց փողոցները կարելի է՞ ուղղակի ջրով լվանալ: Հիշում եմ նախորդ մասնավոր օպերատորի կողմից կատարվում էին Երևանի փողոցների պարբերաբար լվացման աշխատանքներ:

Հայկ Մարության

-Անդրադառնամ ախտահանման աշխատանքներին. ապացուցված է, որ դիմակների կրումը մինչև 90%-ով իջեցնում է վարակի տարածման արագությունը: Նման ուսումնասիրություններ է արվել Ավստրիայում և նրանք այդ ուսումնասիրության արդյունքներով հանդես են եկել: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հստակ նշել է, որ լվացման այդ աշխատանքները չեն օգնում վարակի տարածման կանխարգելմանը: Որևէ կազմակերպության կողմից զեկույց չկա, որը կհայտարարի օգտակարության մասին: Այստեղ խնդիրը վերաբերում է մեծ գումարներ ծախսելուն, որը կլինի աննպատակ:

Փողոցները լվանալու հետ կապված ասեմ, որ երեկ խորհրդակցություն է անցկացվել այդ ուղղությամբ, որին մասնակցում էին նաև «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Արմեն Գրիգորյանը, քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը և քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը: Վարչական շրջաններում ժամը 03.00-06.00, ըստ ժամանակացույցի, կատարվում են փողոցների լվացման աշխատանքներ: Հանձնարարել եմ վերապրոֆիլավորել համապատասխան մեքենաները և, այսուհետ, ամեն օր, ժամը 06.00-08.00 երեսուն մեքենա կլվանան փողոցները: Ժամային այս գրաֆիկը թույլ կտա քաղաքացիներին նորմալ տեղաշարժվել և զգալ թարմ շունչը:

Հոփսիմե Առաքելյան

-Ինչու՞ այս ամենը շուտ չի ձեռնարկվել:

Հայկ Մարության

-Այսպիսի առատ անձրևային ամիսներ չենք ունեցել, անձամբ ասել եմ, որ անձրևների ավարտից հետո այդ աշխատանքները կատարեն ավելի ինտենսիվ:

Մերգեյ Հարությունյան

-Տիկին Առաքելյան, նշեմ նաև առավել կարևորի մասին՝ ՀՀ ԱԻՆ հետ համատեղ Երևան քաղաքի կանգառները ևս ախտահանվում են: Այսինքն, առարկայական այն վայրերը, որտեղ շփումները շատ են, ախտահանվում են:

Հռիփսիմե Առաքելյան

-Նշեմ, որ քաղաքացիները դիմել են խաղահրապարակները և այդտեղ տեղադրված գույքը ևս ախտահանելու համար:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոն Մելքոնյան, խնդրեմ:

Գայանե Մելքոն Մելքոնյան

-Հարցս վերաբերում է «Հին Երևան» նախագծին: Վերջերս մենք խմբակցության որոշ անդամներով հանդիպեցինք նախագծի ճարտարապետ պարոն Վարդանյանի հետ՝ մի շարք հարցեր պարզաբանելու և հասկանալու համար, թե ինչ վիճակում է գտնվում նախագիծը: Հասկացանք, որ այնտեղ կան բավական խնդիրներ՝ կապված հողի իրացման հարցերի հետ: Հարցս հետևյալն է. Ձեր պատկերացմամբ լավագույն սցենարի դեպքում ե՞րբ կարող ենք ակնկալել «Հին Երևան» ծրագրի ամբողջական կատարումը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-«Հին Երևան» ծրագրի հետ կապված քննարկում ենք ունեցել Երևանի քաղաքապետի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի և Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի հետ: Հանդիպումը միտված էր ծրագրի հեռանկարային քայլերին և ճանապարհային քարտեզին, սակայն կոշտաբանամ որևէ դրական տեղաշարժի մասին տեղեկատվություն տրամադրել: Համաձայն գործող կարգի՝ քաղաքապետարանի կողմից այս պահին որոշակի քայլեր են ձեռնարկվել վերգետնյա հարկերի հետ կապված վիճակը պարզաբանելու համար: Խնդիրները ոչ միայն այդ համատեքստում են, այլ կան որոշակի ընթացիկ հարցեր, որոնք կառուցապատողների և ճարտարապետի կողմից նույնպես ենթակա

են կարգավորման: Մասնավորապես, կցանկանամ նշել Ձեր կողմից հիշատակված իրացումների հարցը, որովհետև մինչև Տերյան փողոցի շարունակությունը կան որոշակի գույքեր, որոնք չեն իրացվել, և կառուցապատողների կողմից հստակ ժամկետներ չեն նշվում դրանց իրացման ավարտի վերաբերյալ: Միակ դրական արձագանքը, որը հաճելի լուր էր՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նախագծի վերգետնյա մասին տրված համաձայնությունն էր: Այսօր նախագծային աշխատանքներն ավարտուն տեսք չունեն, որովհետև նախագիծը պետք է ենթարկվեր շրջակա միջավայրի և պետական համալիր փորձաքննության, որը նախկինում չէր իրականացվել, քանի որ տրված են եղել մասնակի թույլտվություններ:

Նախարար Արայիկ Հարությունյանի կողմից եղավ երկու դիրքորոշում: Մասնավորապես, դիտարկվում էր, թե ինչ փուլով է նախարարությունը քննարկելու համաձայնեցման հնարավոր տարբերակները: Եղան առաջարկություններ, որ առաջին փուլով հատված առ հատված համաձայնեցվի նախարարության հետ և մենք տանք համապատասխան թույլտվություն: Մյուս առաջարկը, որն ավելի ծավալուն էր, հաստատվի «Հին Երևան» ծրագրի նախագծի ամբողջական փաթեթը, ինչի հիման վրա Երևանի քաղաքապետարանը փուլ առ փուլ և որոշ վերապահումներով կտա թույլտվություն:

Այս պահին կարևորագույն խնդիրներից մեկն է ճշտել կառույցների կարգավիճակը, որոնք քննվում են իրավապահ մարմինների կողմից, կամ այլ լիազոր մարմինների կողմից նրանց հանդեպ տարվում են փորձագիտական ուսումնասիրություններ: Այդ բոլոր եզրակացությունները պատրաստ լինելուց հետո մենք կհասկանանք, թե որ տարբերակը կընտրենք:

Գայանե Մելքում Մելքումյան

-Շնորհակալություն, իրականում բոլորը սպասում են, որ «Հին Երևան» նախագիծը շուտ իրագործվի, որովհետև քաղաքի կենտրոնում մեծ շինհրապարակ է ձևավորվել: Ինձ համար ամենակարևոր հարցերից մեկն այնտեղ դեռևս կանգուն հուշարձանների խնդիրն է: Եթե մենք տարիներով սպասենք այդ նախագծի իրագործմանը, այդ հուշարձանները կարող ենք կորցնել: Այն, որ դրանք չեն քանդվում, դեռևս չի նշանակում, որ լիարժեք պահպանվում են:

Երկու օրից Առաջին հանրապետության տարեդարձն է: 102 տարի հետո Երևանի կենտրոնում մեր Առաջին հանրապետության հիմնադրի տունը քանդվում է: Ինձ համար շատ ցավալի է և մեր պետության համար, կարծում եմ, ուղղակի ամոթալի է:

Գործընկերներիս տեղեկացնելու համար ասեմ, որ վերջերս գրությամբ դիմել էի քաղաքապետին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Առաջարկվել էր որևէ ճանապարհ գտնել Արամ Մանուկյանի տունը պետության հոգածության տակ առնելու կամ վերականգնելու, Առաջին հանրապետության թանգարանի, Արամ Մանուկյանի տուն-թանգարանի կամ այլ պատշաճ հաստատության վերածելու համար, որովհետև սպասել «Հին Երևան» նախագծի ավարտին, կարծում եմ, շատ ռիսկային է:

Իմ առաջարկը, բնականաբար, օրիգինալ չէր այն իմաստով, որ դրա մասին տարիների ընթացքում խոսվել է, և «Հին Երևան» ծրագրի ճարտարապետն էլ հավաստեց, որ ներկայիս սեփականատիրոջ հետ այդ մասին խոսվել է: Սեփականատերը դրական է տրամադրված, բայց պետությունը չի կարող այդ հարցը թողնել սեփականատիրոջ հայեցողությանը: Վստահ եմ, որ, եթե քաղաքական որոշում կայացվի այդ ծրագիրն իրականացնելու և հստակ ճանապարհային քարտեզ գծվի, հնարավոր է դա իրագործել:

Ես ուզում եմ այս հարցը բերել օրակարգ և խնդրել ներկա գործընկերներիս համատեղ ուժերով այն պահել օրակարգում: Արամ Մանուկյանը եղել է մեր պետականության կերտման առանցքային դերակատարներից մեկը՝ ռազմական, քաղաքական փայլուն գործիչ, մեր առաջին հանրապետության հիմնադիրը: Թողնել, որ նրա տունը քաղաքի կենտրոնում վերածվի փլատակների, կարծում եմ որևէ մեկը երբևէ չի կարողանա պատասխան տալ դրա համար: Մեկ անգամ ևս խնդրում եմ, պարոն քաղաքապետ, գիտեմ, որ Ձեր լիազորություններից մի քիչ դուրս է, բայց քննարկումների ժամանակ այդ հարցը պահեք ուշադրության կենտրոնում:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, տիկին Գայանե Մելքոն Մելքոնյան, ես հարցը պահում եմ ուշադրության կենտրոնում, որովհետև ինքս համակարծիք եմ Ձեզ հետ: Արամ Մանուկյանն այն եզակի քաղաքական գործիչներից է, ով շատ մեծ դեր է ունեցել մեր պետության կայացման գործում: Իմ դիրքորոշումը կհայտնեմ այն քննարկումների ժամանակ, որտեղ ներկա կլինեմ: Հարցը պետության, կառավարության լիազորության շրջանակներում է, մասնավորապես՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Առաջին հարցս վերաբերում է ինքնակամ շինություններին: Տեղեկացա, որ արդեն կա որոշում, որ պետք է համայնքային հողի վրա գտնվող ինքնակամ շինություններն օրինականացվեն: Եթե չեմ սխալվում, մյուս շաբաթ սկսվելու է գործընթացը, ուղղակի պետք է հստակեցվեն, դասակարգվեն անելիքները, թե կոնկրետ որոնք են սեփականաշնորհվելու: Ես կխնդրեի, որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում

տեղադրվեր, թե որոնք են ենթակա օրինականացման, որպեսզի անիմաստ հերթեր չգոյանան: Վստահ եմ, որ հերթեր լինելու են: Կցանկանայի, որ իմ կանխատեսումները ճիշտ լինեն և ինքնակամ շինություններից մուտքագրվող գումարների շնորհիվ սեփական եկամուտների հավաքագրումն այս տարի ևս գերակատարենք:

Երկրորդ հարցս վերաբերում է «Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանության» ՀՈԱԿ-ին: Ինձ տեղեկացրել են, որ ՀՈԱԿ-ը բակային տարածքներում աշխատանքներ կատարելու ոչ մի պարտավորվածություն չունի, որը, իմ կարծիքով, շատ սխալ է: Օրինակ՝ Աջափնյակ վարչական շրջանի ամենականաչապատ գոտին՝ ֆիզիկայի ինստիտուտի հարակից տարածքն է: Եթե այդ տարածքում ՀՈԱԿ-ի կողմից աշխատանքներ չիրականացվեն, ապա ՀՈԱԿ-ի աշխատանքն Աջափնյակում պետք չի լինի: Դա ճիշտ չէ իմ կարծիքով:

Հայկ Մարության

-Ինքնակամ շինությունների մասով, ինչպես նշեցիք, պետք է խորհրդակցություն հրավիրենք, միգուցե նաև այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ ներկա կլինեն այդ խորհրդակցությանը, որպեսզի դասակարգենք և հասկանանք այս պահին ինչ կարող ենք անել և ինչից պետք է սկսել: www.yerevan.am կայքում տեղադրելու հարցը կքննարկենք, որ տարբերակն ամենապրոդուկտիվը կլինի, այդ գործողությունը կիրականացնենք:

Կանաչապատման մասով տեղեկացնեմ, որ այս պահին արդեն սկսվել են նաև բակային տարածքներում աշխատանքներ իրականացնել: Այդ հարցը ևս իմ ուշադրության կենտրոնում է, որովհետև չի կարող կանաչապատման հիմնարկն ավելի վատ արդյունք ունենալ, քան նախկինում: Նորից եմ ասում, որ բացատրությունն այնպես էր, որ նախկինում որոշ աշխատանքներ կենտրոնական փողոցներում չէր արվում, արվում էր բակային տարածքում և այսպես մեկը մյուսին լրացվում էր: Ի վերջո, հիմա ավելի շատ գործ է արվել և արվելու, քան նախկինում արվում էր: Այստեղ հարց է առաջանում, թե որ աշխատանքին ավելի շատ ուշադրություն դարձնել, որի վրա ավելի քիչ: Վերջնակետը, որին պետք է հասնել, դա կլինի այն, որ 100%-ով կարողանալ ապահովել, մշակել, սպասարկել կանաչ տարածքները: Պարոն Մարգարյանն այս հարցին արդեն պատասխանեց նախորդ ելույթի ժամանակ:

Մարկոս Հարությունյան

-Իմ ասածն այն է, որ ՀՈԱԿ-ն այդ աշխատանքները կատարի ոչ թե որպես կողմնակի աշխատանք, այլ հստակ պարտականություն և պատասխանատվություն կրի, որ հետագայում իրենցից պահանջենք: Համաձայն եմ, եթե պետք է բյուջեն ավելացվի, որ դա

իրականացվի, ապա ավելացնենք, բայց ոչ թե միայն կենտրոնական փողոցների, այլ ամբողջ քաղաքի կանաչապատման համար:

Հայկ Մարության

-ՀՈԱԿ-ի կանոնադրությունն ընդունվել է ավագանու կողմից, այդ ժամանակ ոչ ոք չասաց, որ այս կետն ինչի՞ չկա կամ ինչի՞ կա:

Մարկոս Հարությունյան

-Ընդունում եմ, մեր սխալն է եղել, ուշադիր չենք նայել:

Պարոն քաղաքապետ, քանի որ վթարային շենքերի մասով էլ պարզ է, այժմ մի հարց է հետաքրքրում՝ մինչև Ձեր պաշտոնավարման ավարտն Աջափնյակ վարչական շրջանում մետրոյի կայարանի շինարարությունը մեկնարկելու՞ է, ավարտվելու՞ է, ո՞ր փուլում է լինելու: Դուք ի՞նչ տեսլական ունեք Աջափնյակում մետրոյի կառուցման հետ կապված:

Հայկ Մարության

-Նշեմ, որ մետրոպոլիտենը պետական կառույց է, պետությանն է պատկանում, այսինքն՝ համայնքային չէ: Մենք այստեղ ուղղակի օպերատորի դերում ենք: Ինչ էլ լինի, դա պետք է իրականացնի պետությունը՝ կառավարությունը: Մեր դերն այստեղ՝ առավելագույնն արագացնել այդ գործընթացը և առավելագույն տեղեկատվություն, տվյալներ հավաքագրել, որպեսզի ներկայացնենք կառավարություն, վերջինս էլ իր հերթին գործընթացն սկսի:

Վերջին երկու շաբաթվա ընթացքում ունեցել եմ 4 խորհրդակցություն՝ մետրոպոլիտենի հետ կապված, որին ներգրավվել են Հայաստանի Հանրապետությունում մետրոշինության և կամրջաշինության ոլորտի բոլոր մասնագետները, ինչպես նաև ֆինանսիստներ: Համապարփակ հետազոտություն է տեղի ունեցել՝ էսքիզային մակարդակով, որը շատ կարևոր է նշելը: Ինչու էսքիզային, որովհետև վերջնական հաշվարկները՝ թե՛ գումարային, թե՛ ժամանակային, կլինեն, երբ պատրաստ կլինի նախագիծը և նախահաշիվները: Այդ ամբողջ տեղեկատվությունը 2 օր առաջ կառավարությունում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ փոխանցել եմ կառավարությանը: Այս պահին սպասում ենք կառավարության դիրքորոշմանը և մոտեցմանը: Դրանից հետո ավելի կոնկրետ գործողություններ կսկսենք: Այնտեղ 2-3 տարբերակներ կան, ըստ որոնց, ժամանակները տարբեր կլինեն: Եթե պետությունը վարկային միջոցներով դա անի, սա այլ պատմություն է: Այնտեղ վարկային միջոցների, դրամաշնորհի գործընթաց է, որն ավելի երկար կտևի: Եթե դա ծրագրի ձևով է արվելու՝ ներգրավելով մասնավորին, այսինքն՝ մասնավոր-պետություն համագործակցությամբ, դա ավելի կարճ ժամանակահատվածում կունենանք: Այդտեղ էլ պետք է մասնավորի հետ ծրագիրը ճիշտ ձևով կազմվի, որ շահի թե՛ պետությունը, թե՛ մասնավորը: Սա այն երկու ճանապարհն է, որ պետք է ընտրվի: Սրանցից մեկը երբ ընտրվեց,

գործընթացն արդեն առաջ կգնա: Առաջին դեպքում՝ ավելի երկար կլինի գործընթացը, այսինքն՝ վարկը հաստատել, հաշվարկներ անել, նաև ավելի երկար կլինի մրցույթների մասով: Մասնավորի հետ իրականացնելու դեպքում, վարկը հաստատելու և մրցույթների խնդիր չենք ունենա: Այս դեպքում մենք բավականին մեծ ժամանակի տնտեսում կունենանք: Քաղաքապետարանի կողմից էսփիզային տարբերակները և առաջարկները ներկայացվել են կառավարություն:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Եղիազարյան, խնդրեմ:

Գայանե Եղիազարյան

-Պարոն քաղաքապետ, ցանկանում եմ հիշեցնել, որ մայիսի 16-ին Աջափնյակ վարչական շրջանի Մարզարյան փողոց հ. 10 հասցեում կանխվեց ապօրինի շինարարության նախաձեռնությունը: Նշեմ, որ Մարզարյան փողոցը վարչական շրջանի գլխավոր փողոցներից մեկն է հանդիսանում: Ապօրինի շինարարությունը կանխելուց հետո անցել է 10 օր, սակայն գազոնը դեռևս չի բերվել նախնական տեսքին, ասեմ ավելին, շատ փնթի և թափփփված վիճակում է: Ցանկանում եմ հասկանալ, ի՞նչն է պատճառը, որ տարածքը մինչև հիմա չի վերականգնվել և բերվել նախկին տեսքին:

Հայկ Մարություն

-Հարցին կպատասխանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Թելման Թադևոսյանը, խնդրեմ:

Թելման Թադևոսյան

-Շնորհակալություն հարցի համար տիկին Եղիազարյան: Այդ տարածքում, այո, կանխվել է ապօրինի շինարարությունը, քանդման աշխատանքը կատարվել է տնտեսվարողի կողմից: Վերջինիս հետ 2 անգամ քննարկում է եղել, որպեսզի վերացնի այդ թերությունները, խոստացել է, որ կիրականացնի այդ աշխատանքը: Այստեղ, սակայն ուրիշ խնդիր կա. այդտեղ նախկինում գազոն է եղել, հիմա այդ ամբողջ շարքում կրպակաշար է և բոլորը սեփականության իրավունք ունեն: Վերոնշյալ տարածքն այդ կրպակաշարերի մեջտեղում մնացած մի հատված է, որի հետնամասի տարածքի սեփականատերը մոտ 1,5 տարի դիմում է քաղաքապետարան, որ աճուրդով այդ տարածքը ձեռք բերի: Մենք ուղղակի դեռ ընթացք չենք տվել հարցին: Տնտեսվարողը տեսնելով, որ ոչ մի ընթացք չկա, ստիպված սկսել է ապօրինի շինարարությունը: Հորդորել ենք՝ սպասել մինչև որոշում կայացվի, հետո շինարարություն իրականացնել: Ինքը քանդել է և ասել, որ պետք է վերացնի, հիմա սպասում է քաղաքապետարանի կողմից պատասխանի:

Գայանե Եղիազարյան

-Ասեմ, որ տարածքն ընդհանուր առմամբ, որ նայենք 60-րդ հոդվածին համապատասխան հող է համարվում: Գիտենք որ նախկինում բոլոր այդ մայթերի տարածքները զավթված են եղել, հետևաբար, հարակից շինություններ կան, բայց դա չի նշանակում, որ այդ տարածքն էլ պետք է տրամադրվի:

Հայկ Մարության

-Պարոն Աղաբեկյան, այդ հարցով դիմում եղե՞լ է, ի՞նչ է պատասխանվել:

Մհեր Աղաբեկյան

-Պարոն քաղաքապետ, այդ հարցով դիմում եղել է դեռևս անցյալ տարի: Այն ժամանակ հարցում է արվել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ: Պատասխանվել է, որ դեմ չեն այդ հատվածն օտարելուն, բայց առանց կառուցապատման իրավունքի, քանի որ այնտեղ շենք կա և այն պետք է դեպի շենքի հասարակական տարածք տանող ճանապարհ ծառայեր:

Հայկ Մարության

-Ասեմ ձեզ, որ անգամ եթե կրպակաշար է և մի հատված ազատ է, իմ դիրքորոշումն այն է, որ կարող է այդպես էլ մնալ: Հետագայում հնարավոր է, որ համայնքի կողմից գումար նախատեսվի, ամբողջը քանդվի և փոխարենը որևէ ծրագիր իրականացվի կամ վերականգնվի նախկին տեսքը: Այդ դեպքում մենք ևս մի հողատարածք ենք առաջացնում, որը հետո պետք է թանկ արժեքով գնենք կառուցապատողից: Այսպիսի խնդիր էլ կա, որը նույնպես քննարկման ենթակա գործընթաց է: Ինչ վերաբերում է այդ տարածքին, քանի դեռ որոշումը չկա, «կառուցապատողը» պետք է վերականգնի նախկին տեսքը:

Թելման Թաղևոսյան

-Պարոն Մարության, այնտեղ քանդված բետոնը պետք է մաքրվի:

Հայկ Մարության

-Տարածքը նախկին տեսքի բերելու հետ կապված ի՞նչ լծակներ ունենք: Պետք է պարտադրել, որ դա իրականացվի իրենց կողմից, թե՞ մենք պետք է դա անենք:

Թելման Թաղևոսյան

-Պարոն Մարության, ցավոք սրտի, օրենքով նախատեսված լծակ չկա: Միակ լծակը, որ կա, մեր միջոցներով պետք է անենք կամ տնտեսվառողի հետ բանակցել, խնդրել իրականացնել: Տնտեսվարողի հետ ունենք պայմանավորվածություն, որ մոտ ժամանակներս պետք է իրականացնեն այդ աշխատանքը, իսկ եթե հարցը շատ հրատապ է, փորձենք մեր միջոցներով անել:

Հայկ Մարության

-Շատ լավ, այս դեպքում խնդրում եմ այդ հարցը կետային ներկայացրեք պարոն Մեսչյանին, միասին կքննարկենք, հասկանանք խնդրին ինչ լուծում տանք:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրեմ:

Միքայել Մանրիկյան

-Պարոն քաղաքապետ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Հովհաննես Վարդանյանից ստացել եմ դիմում-նամակ, որն ուղղված է Երևանի ավագանու խմբակցություններին և Ձեզ: Հակիրճ ներկայացնեմ. Երևան քաղաքի ավագանին 25.12.2019թ. ընդունել է N188-Ն որոշումը, որով սահմանվել է մեկ հիմնական չափորոշիչ: Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները պետք է տեղակայվեն քաղաքի մի շարք վայրերից և օբյեկտներից 100մ հեռավորության վրա: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 1-ից:

Երևանի ավագանու 25.12.2019թ. նիստի ընթացքում հարցը քննարկելիս իմ կողմից օրինակ բերվեց՝ ենթադրենք ինչ-որ վայրում, որտեղ բնակելի շինություն չկա կառուցվում է գիշերային ակումբ և որոշ ժամանակ անց հարակից հատվածում կառուցվում է բազմաբնակարան բնակելի շենք կամ բնակելի թաղամաս: Մենք պայմանավորվեցինք, որ կունենանք որոշակի կարգավորումներ, սակայն մինչ այժմ այդ կարգավորումները չկան: Դիմել են նաև տնտեսվարող սուբյեկտներ և նշել են, որ պատրաստվում են կառուցել գիշերային ակումբ, բայց խնդրում են ներկայացրել երաշխիք, որ հետագայում խոչընդոտ չենք հանդիսանա: Ի՞նչ փուլում են գտնվում աշխատանքները: Եթե զրոյական փուլում է գտնվում, ապա ե՞րբ կսկսվի աշխատանքները, որպեսզի հնարավոր լինի տնտեսվարող սուբյեկտներին հիմնավոր պատասխան ներկայացնել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Պարոն Մանրիկյան, ուզում եմ հստակ արձանագրել մեկ կետ, որ Երևանի քաղաքապետարանն օրենք չի ընդունում: Օրենքը գործում է և Երևանի ավագանին ընդամենը սահմանել է այդ 100մ հեռավորությունը: Բավականին երկար բանակցությունների արդյունքում օրենքն ուժի մեջ մտնելու համար տրվեց մոտ մեկուկես տարի ժամկետ, որպեսզի տնտեսվարողներին ժամանակ տրվի մշակել իրենց ապագա գործունեության մեթոդաբանությունը: Գիտակցում ենք, որ ցանկացած գործում կա բիզնես ռիսկեր, որոնք պետք է հաշվարկել: Նշված նամակն ուղարկվել է նաև ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային

ժողով: Հարցն ուսումնասիրվում է: Ցանկանում եմ ևս մեկ անգամ տնտեսվարողներին բացատրել, որ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, իսկ Երևանի ավագանու կողմից սահմանվել է հեռավորության չափը:

Հայկ Մարության

-Հարցին կանդիդատնա նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Մաֆարյանը:

Հովիկ Մաֆարյան

-Պարոն Հարությունյանի կողմից նշվեց, որ Երևանի ավագանու կողմից սահմանվել է հեռավորության չափը: Ռիսկի հետ կապված անդրադարձ եղել է նաև նախորդ նիստի ընթացքում: Հնարավոր է որևէ տնտեսվարողի կողմից կառուցվի գիշերային ակումբ՝ սահմանափակման ենթակա ծառայություն և հետագայում, մոտակայքում մինչև 100մ հեռավորությունը, տրվի շինթույլություն, որի արդյունքում կառաջանա գործունեության իրականացման խոչընդոտ: Այս պարագայում հնարավոր է կանխատեսել այդ ռիսկը, որպեսզի բիզնեսը վնաս չկրի: Երևանի քաղաքապետարանի կողմից շինթույլություն տրամադրելիս պետք է հաշվի առնել, որ այդ տարածքում առկա է գործունեություն իրականացնող սահմանափակման ենթակա ծառայություն:

Միքայել Մանրիկյան

-Հնարավորություն չկա արդյոք այս կարգավորումներով հիմնավորել, որպեսզի հետագայում խնդիր չառաջանա: Օրինակ՝ ներկայացնեմ բիզնեսի տեսակետը. կա ներդրող, որը մոտ 3 միլիարդ դոլարի ներդրում է իրականացնելու Իսակովի պողոտայում՝ գիշերային ակումբ կառուցելու համար: Ի դեպ, պարոն քաղաքապետ, նամակն առկա է և Ձեզ կփոխանցեմ: Սակայն ներդրողն ունի մտավախություն, քանի որ հետագայում կա մեծ ռիսկ խնդիրների առաջ կանգնելու համար: Ի՞նչ է հնարավոր անել: Միգուցե, մեր գործառույթների շրջանակներում ներկայացնենք կարգավորումներ, որպեսզի տնտեսվարողները երաշխիք ունենան և կարողանան իրենց գործունեությունն իրականացնել:

Հայկ Մարության

-Հարցի վերաբերյալ պարզաբանում կներկայացնի նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Պարոն Մանրիկյան, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի (ընդունված 2004թ.) հիման վրա նախատեսվել էր ավագանու որոշման փոփոխություն՝ 100մ հեռավորության սահմանափակում թվով 8-9 օբյեկտների վերաբերյալ: Ցանկանում եմ նշել

հարցի վերաբերյալ մեր մոտեցումը ոչ իրավական կարգավորման տեսանկյունից, սովորաբար, էթե տրվում է թույլտվություն, ապա ուսումնասիրում ենք հարակից տարածքները, որի մասին կփաստի նաև քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Միեր Աղաբեկյանը: Այսինքն, էթե բնակելի տուն է, ապա կա գոտիավորման նախագիծ, որով սահմանվում է հասարակական և բնակելի գոտիները: Ունենալով հիմքեր, էթե հասարակական գոտում թույլատրվում է բնակելի գոտու կառուցում կամ հակառակը, ապա պարտադիր նախապայման է՝ հիմքում դնել հարակից տարածքների ուսումնասիրությունը:

Պահանջվում է տարածական լուսանկարներ և հարակից կառույցների վերաբերյալ տեղեկատվություն: Տվյալ կառուցապատողի կողմից էթե ներկայացվում է տեղեկատվություն, որում նշվում է, որ հարակից տարածքում գործում է հեստապարային ակումբ կամ խանութ, ապա արվում է վերլուծություն, որ տվյալ տարածքում բնակելի շենքի կառուցումը կառաջացնի խնդիրներ: Ավագանու որոշման մեջ նշված է, որ սահմանափակման ենթակա ծառայությունների օբյեկտների միջև սույն որոշման 1-ին կետով սահմանված հեռավորությունը կարող է չպահպանվել անհատական բնակելի տան, հանրային սննդի օբյեկտի, հյուրանոցի սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում: Այսինքն, մեր կողմից համակարգումը չունենալով, իրավական հիմնավորումներ, դիտարկում ենք այդ կոնտեքստում:

Հայկ Մարության

-Հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանում կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Խնդիրը միայն հեստապարային ակումբներին չի վերաբերում, նույն խնդիրն առկա նաև սգո սրահների գործունեության դեպքում: Այսինքն, պետք է լինի հստակ կարգավորում տվյալ տնտեսվարողի գործունեության նկատմամբ: Եթե տնտեսվարողն ինչ-որ տարածքում գնում է հողատարածք և պատրաստվում է կառուցապատում իրականացնել, ապա այս դեպքում իրենց կողմից ևս պետք է հաշվարկ կատարվի բիզնես ռիսկի վերաբերյալ: Այսինքն, հետագայում այդ տարածքում այլ շինության կառուցումը հնարավոր է արդյոք ստեղծի խնդիր: Ներկայումս, խնդրահարույց դեպք կա. տվյալ տարածքում գործում է ռեստորան, մինչև 100 մ հեռավորության վրա գործում է սգո սրահ: Նախկինում եղել է կոնսետունս և աշխատել են, իսկ ներկայումս ունեն տարածայնություններ: Տարածայնությունների արդյունքում նշված տնտեսվարողները ներկայումս չունեն լիցենզիա և հարուցվել է վարույթ:

Օրենքը նախատեսում է կարգավորում և տնտեսվարողները կարող են գալ փոխհամաձայնության:

Միքայել Մանրիկյան

-Պարոն Հարությունյան, ցանկանում եմ մեկ նկատառում անել. բնակելի մասնավոր սեկտորի դեպքում և բնակիչների համաձայնության առկայությամբ տվյալ սգո սրահը կարող է գործել:

Սերգեյ Հարությունյան

-Եթե չեմ սխալվում բազմաբնակարան շենքի մասին չէ խոսքը:

Միքայել Մանրիկյան

-Օրինակ՝ ես հանդիսանում եմ տան սեփականատեր և իմ կողմից տրվել է համաձայնություն: Որոշ ժամանակ անց տունը վաճառում եմ և տան նոր սեփականատերը համաձայնություն չի տալիս: Այդ դեպքում պայմանագիրը լուծարված կհամարվի թե՞ ոչ:

Սերգեյ Հարությունյան

-Այս հարցի վերաբերյալ պարզաբանում կարող են ներկայացնել իրավաբանները:

Միքայել Մանրիկյան

-Այդ դեպքում հարցը կքննարկենք քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Մուրադյանի հետ համատեղ և արդյունքների մասին կտեղեկացնենք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ԲԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Վարդանյան, խնդրեմ:

Գայանե Վարդանյան

-Շնորհակալություն, երկու հարց ունեմ, որոնցից առաջինն առաջարկի տեսքով է: Ինչպես գիտենք շատ երկրներ և քաղաքներ համաճարակով պայմանավորված սահմանափակումները հանելուց հետո վերանայում են իրենց կառավարման հայեցակարգերը և փորձում են խրախուսել առողջ ապրելակերպը: Ես ուզում եմ առաջարկել, որ մենք ևս սկսենք մտածել փոքր կենտրոնի որոշ փողոցները և յուրաքանչյուր վարչական շրջանում քաղաքացիների համար զբոսանքի ամենասիրելի վայրերը շաբաթ և կիրակի օրերին դարձնել բացառապես հետիոտնի համար, այսինքն՝ արգելել երթևեկությունը: Ես գիտեմ, որ սրա հետ կապված կարող էք ասել, որ տրանսպորտի ռեֆորմը չենք արել, այս տեսակ սահմանափակում անել չենք կարող: Ես կարծում եմ, որ մենք արդեն մի քիչ սովորեցինք մեքենաներ չվարել, ավտոկայանատեղիներում կայանել և սկսեցինք ավելի շատ քայլել: Մա գուցե լավ ժամանակ է այս տեսակ հեղափոխական քայլ անելու և քաղաքը մի քիչ ավելի հարմարեցնելու հետիոտներին: Մենք այսպես կխրախուսենք առողջ ապրելակերպը,

ինչպես նաև կամաց-կամաց կփորձենք սովորեցնել տրանսպորտի գալիք ռեֆորմին և մարդկանց ասել, որ բավական է վարել մեքենաներ, ինչպես նաև մի քիչ ավելի կնվազի վտանգավոր արտանետումները: Ուզում էի հասկանալ Ձեր դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ:

Հայկ Մարության

-Տիկին Վարդանյան, ես շատ դրական եմ վերաբերվում այդ հարցին և այդ մասին մտածել եմ դեռ հեղափոխության օրերին: Երբ փողոցները փակ էին և մենք հեծանիվներով էինք տեղաշարժվում, մտածեցի, որ հետաքրքիր կլինի շաբաթ և կիրակի, կամ միայն կիրակի օրերին կենտրոնում որոշ փողոցներ դարձնել հեծանվային և ոտքով քայլելու զոնաներ: Սակայն ճիշտ հաշվարկ անելուց հետո միայն, որպեսզի խնդիր չառաջանա տրանսպորտի համար, լինեն այլընտրանքային ուղիներ, միայն թե անել այնպես, որ հեծանիվն ու հետիոտնը չբախվեն իրար: Ես դեմ չեմ, մենք կարող ենք մտածել այդ ուղղությամբ և սկսենք գործարկել կիրակի օրերին:

Պարոն Գալստյան, խնդրում եմ հաշվարկ անել, թե ՃՈ-ի հետ համատեղ կիրակի օրերին, որ փողոցները կարելի է փակել, որպեսզի դժգոհություններ չլինեն: Կփորձենք մի քանի շաբաթ, եթե երևանցիների կողմից ընդունվի, կանենք, իսկ եթե ոչ՝ կասենք կներեք, տիկին Վարդանյան, չստացվեց: Շնորհակալություն:

Գայանե Վարդանյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ. ավագանու վերջին նիստերից մեկի ժամանակ քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգարյանը խոսեց սոցիալական ապահովության ոլորտի բարեփոխումների մասին: Ծանոթացանք սոցիալական ապահովության վարչության և փորձագիտական խմբի ներկայացրած այն լայնածավալ ուսումնասիրությանը, որ արվել էր այդ ոլորտում: Ուսումնասիրվել էր առկա համակարգը, կադրերը, աջակցության մեխանիզմները և առաջ էր քաշվել նոր հայեցակարգ: Ցանկանում եմ հասկանալ, թե մենք ե՞րբ կարող ենք ակնկալել այս բարեփոխումն իրավական ձևակերպումներով և որոշումներով տեսնել մեր օրակարգում, ինչպես նաև արդեն իրականացված իրողություն Երևան քաղաքում, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգարյանը, խնդրեմ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, արդեն պլանավորված է, ճանապարհային քարտեզը կա, թե ինչ հերթականությամբ ենք շարժվելու: Նախատեսում ենք ավագանու հաջորդ նիստին որոշման նախագծի տեսքով ներկայացնել ձեր հաստատմանը:

Հայկ Մարտիրոսյան

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Լյուդմիլա Սարգսյան: Լյուդմիլա Սարգսյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Պավել Սարգսյան, խնդրեմ:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Հարգելի գործընկերներ, ես կցանկանայի անդրադառնալ Երևան քաղաքի տարածքում շահագործվող հանքերին: Այս պահին ունենք շահագործվող 23 հանք, որոնցից մեկը ստորգետնյա հանք է՝ Ավանի աղի հայտնի կոմբինատը, իսկ մյուս 22-ը բաց հանքեր են: Նշված բոլոր հանքերը գտնվում են բնակավայրերին շատ մոտ, և համայնքն այս դեպքում, իրավական տեսանկյունից, շահագործումը վերահսկելու ուղիղ անմիջական ազդեցություն չունի: Էրեբունի, Նոր Նորք և Աջափնյակ վարչական շրջաններում, որտեղ հանքեր են շահագործվում: Ինչքան էլ մենք նոր մեքենաներով, փոշեկուլներով կամ այլ միջոցներով փորձենք մաքրել, փոքր քամու դեպքում ամբողջ քաղաքը կորում է հողի և փոշու մեջ և այդ ամբողջ աշխատանքը զրոյանում է:

Հարցս հետևյալն է. գիտեմ, որ պայմանագրեր կան, որ լիցենզիաներն ավարտվում են, կան հանքեր, որոնք հիմա չեն շահագործվում: Սկսվել է արդյոք այդ հանքերի կոնսերվացման գործընթացը, ունենք արդյոք դադարեցնելու հնարավորություն:

Հայկ Մարտիրոսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը, խնդրեմ:

Հայկ Մարգարյան

-Պարոն Սարգսյան, հանքերի շահագործման մասով Դուք ճիշտ նկատեցիք, որ համայնքը չափազանց սահմանափակ լիազորություններ ունի, և դա սահմանափակվում է միայն ընդերքօգտագործման ակտերի հիման վրա առանձնացված տարածքները կամ դրանց մի մասը վարձակալությամբ տրամադրմամբ: Ավել գործառույթ համայնքն այստեղ չունի:

Ինչ վերաբերում է այդ պայմանագրերի դադարեցմանը, դրանք քաղաքական պայմանագրեր են, և դրանց դադարումը սահմանափակվում է քաղաքացիական օրենսգրքով: Որպես կանոն, դրանք գործում են մինչև դրանց ավարտը, եթե պայմանագրով նախատեսված պայմանների էական խախտումներ տեղի չեն ունեցել: Մեզ մոտ ձևավորվել է հանձնաժողով, որը զբաղվում է հանքերի շահագործման պայմանագրերի ուսումնասիրմամբ և

կառավարմամբ: Այդ հանձնաժողովից Դուք կարող եք ստանալ առավել մանրամասն տեղեկատվություն: Ես ուղղակի ասեմ, որ կան հանքեր, որոնք, նույնիսկ, համայնքի տարածքում չեն, և այդ 23 հանքերում ևս կան այդպիսիք, դրանք անտառտնտեսության տարածքներն են, որոնք ժամանակին պետության կողմից են տրամադրվել: Մենք մշակել ենք մեխանիզմ. օրինակ, եթե պայմանագրերը պետք է ավարտվեն ինչ-որ ժամանակ, 3 ամիս առաջ մենք ուղարկում ենք ծանուցումներ, որ համայնքը հայտնում է, որ այս պահին չունի մտադրություն շարունակելու պայմանագիրը, որպեսզի քաղիրավական պայմանագրի դրույթով ավտոմատ չերկարացվեն և նորից ունենանք խնդիր դրանք խզելու անհրաժեշտության դեպքում: Կան հանքեր, որոնց պայմանագրերը կնքված են, վճարվում են, բայց չեն շահագործվում: Կան հանքեր, որոնց պայմանագրերը կնքված են, չեն վճարվում, չեն շահագործվում: Կան, որ շահագործվում են ու չեն վճարվում: Սրանց հետ կապված աշխատանք է տարվում, յուրաքանչյուրի մասով տեղեկատվություն կարող եք ստանալ հանձնաժողովից:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կանդրադառնա բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Նավասարդյանը, խնդրեմ:

Գևորգ Նավասարդյան

-Երևան համայնքում այս պահին ունենք 23 հանքավայր: Այս տարի հունիսին և նոյեմբերին ավարտվում է երկու հանքավայրի մասով ընդերքօգտագործման իրավունքը: Քաղաքապետարանը, կարծում եմ, կարող է դիմել տվյալ ոլորտի լիազոր մարմին, որպեսզի դրանց շահագործմանը հետագա ընթացք չտրամադրվի:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս վերաբերում է ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանի կողմից վերջերս առաջ բերված առաջարկին և գաղափարին՝ Ծիծեռնակաբերդի այգու տարածքում «Հայ պարկ»՝ համերաշխության և հիշողության համազգային այգի հիմնելու վերաբերյալ: Ծիծեռնակաբերդի հարակից տարածքում համայնքն ունի մոտ 8 հա տարածք: Արդյոք մենք միանալու ենք գաղափարին, եթե այո, ապա ի՞նչ մեթոդաբանությամբ, ի՞նչ տեսքով և գործողություններով, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, վերջերս այդ առաջարկի հետ կապված Նախագահի մոտ եղել եմ խորհրդակցության, մինչև այդ 8 հա հասնելը բավականին մեծ պրոցես կա: Ես արձանագրեցի, որ այս հարցը նույնպես կառավարության լիազորությունների տիրույթում է,

քանի որ այդ 100 հա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաշվեկշռում է: Իրենք պետք է որոշեն արդյոք միանալու են այդ ծրագրին, թե՛ ոչ:

Հաջորդ օրը քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Սարգսյանը ներկա է գտնվել կառավարությունում հրավիրված խորհրդակցությանը, որտեղ ներկա են եղել բոլոր կողմերը: Սա մեծ ծրագիր է, որը դեռ քննարկման փուլում է և մեզ համար շատ կարևոր է կառավարության դիրքորոշումը:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Կիրակոսյան, խնդրեմ:

Լիլիթ Կիրակոսյան

-2020թ. հաստատեցինք զարգացման ծրագիրը, որտեղ ներառվել էր բնապահպանությանը և կանաչապատմանը վերաբերող մի քանի կետեր: Ցանկանում եմ կարդալ այդ կետերից մի քանիսը և պատասխան ստանալ, թե ի՞նչ ընթացքի մեջ են դրանց հետ կապված աշխատանքները: Դրանք են՝ Սարալանջի 10 հա բուֆերային անտառաշերտի վերականգնումը, Կոմիտասի անվան այգու հիմնանորոգումը, Ծիծեռնակաբերդի 8 հա տարածքի վերականգնումը, ջրաշխարհի աջակողմյան լանջի 12 հա տարածքի անտառաշերտի վերականգնումը, կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերումը, շների զբոսանքի համար զբոսայգիների ստեղծումը և «Փարոսի» անտառի վերականգնումը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Սարգսյանը, խնդրեմ:

-Հրայր Սարգսյան

-Բազմիցս նշել ենք, որ առանց ոռոգման ցանցի կանաչապատում չենք կարող անել: Այդ կոնտեքստի շրջանակներում Սարալանջում արդեն ոռոգման ցանցի աշխատանքներն իրականացվում են: Կարծում եմ, ամենաուշը 1-2 ամսից կվերջացնենք և աշնանը հնարավորություն կունենանք արդեն ծառատնկման և թփապատման ծրագրի որոշ աշխատանքներ իրականացնել:

Ինչ վերաբերում է Ծիծեռնակաբերդի բարձունքին, այնտեղ ունենք 8,5 հա անտառապատման համար, որի համար արդեն պատրաստ է ոռոգման ցանցի նախագծանախահաշվային փաստաթուղթը: Հաջորդ շաբաթ երևի կներկայացնենք մրցույթի, և կիրականացվեն շինարարական աշխատանքներ: Աշնանն արդեն հնարավորություն կունենանք այնտեղ ծառատնկման աշխատանքներ իրականացնել:

Ինչ վերաբերում է «Փարոսի» անտառին, այնտեղ կան տնկված մրգատու ծառեր, և ունենք միայն հողի պարարտացման հարց: Նորքի 12 հա հետ կապված ասեմ, որ 1 ամսից կունենանք դրա վերջնական նախագիծը: Շների զբոսայգիների հարցը նույնպես ընթացքի մեջ է, որպես տիպային օրինակ ստեղծվում է նախագծանախահաշվային փաստաթուղթ, ըստ որի, եթե չեմ սխալվում, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների տարածքում պատրաստվում էինք շների զբոսանքի համար համապատասխան վայր ունենալ:

Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենասարքավորումների ձեռքբերման համար մեկ-երկու անգամ մրցույթ է հայտարարվել, որը չի իրականացվել: Այս պահի դրությամբ հանձնարարական կա քաղաքապետի կողմից, ըստ որի, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենը պետք է ներկայացնի, թե ինչ տեխնիկա է անհրաժեշտ աշխատանքները պատշաճ կատարելու համար: Այնուհետև քննարկում կունենանք և տեխնիկայի ձեռքբերման համար մրցույթ կհայտարարենք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան: Նուարդ Վարդանյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Երկու հարց ունեմ, առաջին հարցս վերաբերում է սոցիալական ոլորտի բարեփոխումների ծրագրին: Մեր խմբակցության առաջարկներում նշել էինք, որ այս ռեֆորմը շատ կարևոր է: Հատկապես կորոնավիրուսի առաջադրած խնդիրները լուծելու համար, իսկապես, պետք է ունենալ շատ լավ սոցիալական աջակցության համակարգ և այն սաղմերը, որ կան, եթե այդպես կատարվի, շատ լավ կլինի: Այստեղ, սակայն մի շատ կարևոր գործոն կա, որ քաղաքապետարանի ամբողջ համակարգը, ներառյալ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերը պետք է հստակ հասկանան, թե ինչ ռեֆորմ է դա և ինչ լուծումներ է առաջարկում: Քանի որ առաջին հայացքից կարող է թվալ, որ վերակազմավորման արդյունքում որոշ մարդիկ գործը կկորցնեն: Նման մտավախությունը կարող է բերել նրան, որ մարդիկ ինչ-որ կերպ փորձեն ընդդիմանալ և դա բնական է այս դեպքում:

Մենք առաջարկել էինք անպայման քննարկում ծավալել: Այն ամենն ինչ մեզ ներկայացրեց Հրաչյա Սարգսյանը, ավելի մանրամասն և պրակտիկ ներկայացվի վարչական շրջանների և սոցիալական բաժինների ղեկավարներին, որպեսզի բոլորը հասկանան այդ ռեֆորմի էությունը և աջակցեն:

Ի՞նչ է պլանավորված, որպեսզի այդ ռեֆորմի էությունը պրակտիկորեն հասկանալի և բացատրելի լինի իրականացնողներին, որովհետև ենթադրում եմ քաղաքապետարանը պետք է դա իրականացնի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգարյանը:

Հրաչյա Մարգարյան

-Կցանկանայի նշել մի փաստ, որ ցանկացած լավ միտք, նախագիծ կարող է չիրականանալ, եթե չլինի այն թիմը, որը ցանկություն ունի այն իրականացնելու: Այդտեղ պետք է դիտարկել այդ երկու կոմպոնենտները՝ թե օրինակ, ինդիքը նախագծի մեջ էր, թե իրականացնողի: Ամբողջությամբ կիսելով Ձեր տեսակետը, մենք նույնպես պլանավորել ենք, որ առաջնային՝ վարչական շրջանների ղեկավարների հետ հանդիպում կունենանք, որտեղ կներկայացնենք այն փոփոխությունները, որոնք նախատեսում ենք: Հանդիպում կունենանք նաև սոցիալական բաժինների հետ և իրենց նույնպես կներկայացնենք այդ փոփոխությունները: Կարծում եմ, որ հնարավորություն կունենանք համատեղ ուժերով իրականացնել այդ փոփոխությունները՝ Երևան համայնքում թողնելով կայացած համակարգ, որպեսզի հետագայում մարդիկ կարողանան շարունակել ավելի արդյունավետ, կարողություններով լի անձնակազմ ունենալ:

Ինչ վերաբերում է հանդիպմանը, մինչև ավագանու հաջորդ նիստը՝ հունիսի 24-ը, այն տեղի կունենա: Մինչև Երևանի ավագանու հաստատմանը ներկայացնելը՝ և՛ վարչական շրջանների ղեկավարների հետ, և՛ սոցիալական բաժինների հետ անպայման հանդիպում կլինի: Այս պահի դրությամբ հստակ օր ասել չեմ կարող, բայց անպայման կտեղեկացնենք: Ավագանու խմբակցություններին գրություններ են ուղարկվել, որ գրավոր ներկայացնեն իրենց առաջարկությունները: Ներկայացված բոլոր առաջարկությունները կդիտարկվեն: Եթե չեմ սխալվում անցած շաբաթ ստացել ենք վերջնական առաջարկները, որը կամփոփենք ու կներկայացնենք վարչական շրջանների ղեկավարներին և աշխատակիցներին:

Սաթենիկ Մկրտչյան

-Երկրորդ հարցս կրկին կորոնավիրուսի հետևանքներին է վերաբերում: Մենք մանկապարտեզներում լրացուցիչ ծառայություններ մատուցող դաստիարակներից հաճախ ստանում էինք զանգեր, ովքեր հետաքրքրվում էին իրենց աշխատավարձի մասին:

Ես բացատրում էի, որ իրենց աշխատանքը ծառայությունների մատուցում է, որը կարգավորվում է քաղիրավական պայմանագրով: Պարապուրդի վճարը ձեզ չի վերաբերվում:

Խնդրեցի, որ բերեն պայմանագրերը, հասկանանք ինչու նրանց չի վճարվել և ինչու են իրենք անընդհատ մերժվում աջակցության այդ ծրագրից օգտվելու համար :

Ի զարմանս ինձ, պարզվեց, որ գոնե մի քանի դեպքում այդ պայմանագրերը հանդիսանում էին աշխատանքային պայմանագրեր: Պարզ է, թե ինչու են մարդկանց մերժել, որովհետև աշխատանքային պայմանագրով չէին կարող դիմել պետական այդ ծրագրերին:

Պարզվում է, որ մանկապարտեզներում բավականին շատ դաստիարակներ առանց հաստիքացուցակի աշխատում են աշխատանքային պայմանագրերով և մատուցում են լրացուցիչ ծառայություններ: Սա համակարգային խնդիր է, որը բացահայտվում է ուսումնասիրության արդյունքում: Մյուս խնդիրն էլ այն է, որ դաստիարակների մոտ պայմանագրեր չկան, մարդկանց ստիպում ենք, որ ներկայացնեն կամ տնօրենից վերցնեն: Բավականին դժվարություններով ստանում են պայմանագրերը և պարզվում է, որ շատ մեծ թվով մարդիկ ունեն աշխատանքային պայմանագրեր և չեն վճարվել: Սա համակարգային խնդիր է, որին ընդհանրապես չի անդրադարձվել: Հարցս այս ամենի հետագա ընթացքի մասին է:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը, խնդրեմ:

Հայկ Մարգարյան

-Տիկին Մկրտչյանի հետ այս հարցի շուրջ քննարկման ընթացքում արձանագրվեց, որ թիվը բավական մեծ է: Իրականում տնօրենների մի սովոր զանգված ժամավարձային հիմունքներով քաղիրավական պայմանագրեր կնքելու փոխարեն, կնքել են աշխատանքային պայմանագրեր: Ենթադրում եմ, որ հաստիքների կցված ռեժիմի ձևով, որովհետև աշխատանքային պայմանագիրն ինքնին ենթադրում է համապատասխան հաստիքի առկայություն: Նշեմ, որ 254 դեպքից 203-ի մասով կնքվել են ոչ քաղիրավական պայմանագրեր, սահմանված աշխատավարձերով, հաճախ նաև նվազագույն աշխատավարձը պահպանված դրույքաչափով: Արդյունքում, երբ արտակարգ դրության պայմաններում աշխատանքը դադարեցվել է այդ հիմնարկներում, աշխատակիցները, ծրագրով նախատեսված աշխատաժամը չապահովելու դեպքում, չպետք է վճարվեն, եթե պայմանագիրը կնքված լիներ ճիշտ և համապատասխան: Արդյունքում տեղի է ունեցել տիկին Մկրտչյանի նկարագրած երևույթը, որ նրանք չեն կարողացել վճարվել:

Այլ կերպ ասած տնօրենի կողմից փոքր սխալը կուղղվեր մեծ սխալով: Տնօրենը պետք է վճարեր աշխատակիցներին իրենց պայմանագրերով նախատեսված համապատասխան գումարներ: Քանի որ մանկապարտեզները ֆինանսավորվում են երեխաների թվով և դա չի կարող գերազանցել հաստիքացուցակով նախատեսված աշխատավարձի ֆոնդը, այստեղ

առաջացել է կազուս: Այս դեպքում տնօրենը չի կարողանում վճարել իր աշխատակցին, որովհետև դրա համապատասխան գումարը չի փոխանցվել: Գումարը չի կարող փոխանցվել, որովհետև տարիֆիկացիայով և հաստիկացուցակով այլ թիվ է սահմանված:

Մյուս կողմից, հարկադիր անգործության շրջանում, այդ աշխատակիցները չեն ստանում պետական աջակցություն, որովհետև վճարումը ժամավճարով է: Սա է խնդիրը: Այս պահին գործը փոխանցված է իրավաբանական վարչություն, սպասում ենք իրավական դիրքորոշմանը:

Հայկ Մարության

-Փաստացի կարող ենք արձանագրել, որ այս վատ պատմության մեջ մի դրական կողմ կա. բացահայտվեց, որ կա խնդիր, որը պետք է կարգավորել: Ջարմանալի է, որ դեպքերի մեծամասնությամբ հաստիքացուցակից դուրս հաստիք է սահմանվել և վճարվել:

Հայկ Մարգսյան

-Այո, պարոն քաղաքապետ, նշեմ, որ տվյալ աշխատակիցների կողմից դժգոհություններն արդարացված են: Այդ մարդիկ ընդունվել են որոշակի պայմանով և իրենք չպետք է հսկողություն սահմանեն պայմանագրի իրավական ռեժիմի նկատմամբ, որովհետև դա տնօրենների պատասխանատվության տակ է:

Ինչ վերաբերում է մեր կողմից ֆինանսավորմանը՝ մենք չենք ֆինանսավորելու, որովհետև դա մեր կողմից հաստիքացուցակով հաստատված չէ: Աշխատակիցների ֆինանսավորման միակ տարբերակը իրականացվել է մանկապարտեզների արտաբյուջետային միջոցների կամ տնտեսումների հաշվին, եթե կնքված են ոչ ժամավճարային պայմանագրեր: Ժամավճարի դեպքում այս խնդիրը չկա:

Վերջնական արդյունքում պետք է հասկանանալ իրավական դաշտում ինչպես կարգավորել այս հարցը:

Հայկ Մարության

-Այն դեպքում, որ տնօրենը չի վճարում, ասում է, որ չկա ֆինանսական միջոցներ, ի՞նչ է տեղի ունենում:

Հայկ Մարգսյան

-Քանի որ մանկապարտեզը հանդիսանաում է համայնքի ենթակայության հիմնարկ, մենք կրում ենք որոշակի ֆինանսական պատասխանատվություն նրանց պարտավորությունների նկատմամբ: Նշում եմ իրավական, որովհետև, եթե պարզվի, որ դա տնօրենի կառավարման գործառույթների թերացում է կամ անգործության հետևանք, հետագայում հարց է առաջանալու, թե որպես համայնքի ենթակայության հիմնարկ՝ փոխհատուցված գումարն ինչ եղանակով պետք է բյուջե վերադարձնել:

Սաթենիկ Մկրտչյան

-Ես մի քիչ ավելի հետևողական ուսումնասիրեցի նաև հարակից հանգամանքները: Տեսնանելի է այն փաստը, որ այս խնդիրն համատարած է, խոսքը մի տնօրենի մասին չէ: Փաստորեն դա ընդունված կարգ է եղել տարիներ շարունակ և դրա մասին գոնե այդ ոլորտը կառավարող վարչությունը պետք է տեղյակ լիներ: Այդ խնդրի կանխարգելման աշխատանքները պետք է սկսվեր արդեն իսկ կորոնավիրուսի տարածման օրերից: Հատակապես հիմա մենք ունենք չվճարված պարտավորություններ:

Այդ մարդկանց հետ պայմանագիրը նախապես պետք էր խզել, որպեսզի իրենք փոխադարձ համաձայնության արդյունքում, կարողանային դիմել այդ ծրագրին: Ես դիմել եմ և ստացել արդյունքները: Այստեղ, իհարկե, կան բազմաթիվ մերժումներ, որովհետև մարդիկ ունեցել են անհամապատասխան պայմանագրեր:

Կարծում եմ, որ լուծումն այդ մարդկանց վճարելն է: Ես պատրաստվում եմ հետևողական լինել այս հարցի լուծմանը: Խնդիրը տնօրենների պատասխանատվությանը կարելի էր թողնել, եթե ունենայինք 1-2 դեպք, բայց սա համակարգային խնդիր է:

Հայկ Մարության

-Հարցին կանդրադառնա քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Պարոն քաղաքապետ, ուսումնասիրելու անհրաժեշտություն չի եղել և այս խնդիրը չի առաջացել, որովհետև երկար տարիներ մանկապարտեզների տնօրենները երեխաների համար վճարած գումարներից ստացել են արտաբյուջտային մուտքեր և աշխատակիցներին ժամանակին վճարել են ու որևէ դժգոհություն չի եղել: Դա հանդիսացել է պատճառ, որ այլ պայմանագրերի ձևաչափերի ուսումնասիրելու անհրաժեշտություն չի եղել, որովհետև ունեցել ենք հաստիքացուցակային աշխատողների ֆիքսված պայմանագրեր: Այլընտրանքային ծառայություններ մատուցող աշխատողների վարձատրության հարցը կարգավորվել է մանկապարտեզի տնօրենի կողմից: Քաղաքապետարանը որևէ ֆինանսավորում չի արել և այդ պայմանագրերն ստուգելու անհրաժեշտություն չի առաջացել: Այո՛, կա խնդիր: Ես տեղյակ չեմ, թե մանկապարտեզների տնօրենները պայմանագրերի կնքումը վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան իրավաբանների հետ են քննարկել կամ որտեղից են վերցրել պայմանագրերի տվյալ ձևաչափը: Նշեմ, որ մեր կողմից, գոնե իմ ենթակայության վարչության կողմից պայմանագրի ձև չի տրվել և դրա իրավասությունը չունի: Իրենք պետք է կնքեն այն պայմանագրերը, որոնք օրենքով իրենց վերապահված է, որի իրավունքն ունեն: Այս պարագայում ֆինանսական պարտավորությունը, բնականաբար, մնում է մանկապարտեզի՝ հետևաբար, նաև

քաղաքապետարանի վրա: Մենք այս խնդիրն ուսումնասիրում ենք և պարոն Սարգսյանի հետ համատեղ արդեն 1-2 քննարկում կայացել է: Ամբողջական ծավալը կուսումնասիրվի, բնականաբար, պարտավորություն կկրենք կատարվածի համար: Այն մանկապարտեզների տնօրենները, ովքեր օրենքի չիմացության կամ թույլ կիրառման պատճառով ստեղծել են այս իրավիճակը, պատասխանատվություն կկրեն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ԲԱՅԼԸ խմբակցության անդամ Աննա Ջավախյան, խնդրեմ:

Աննա Ջավախյան

-Առաջին հարցս վերաբերում է մանկապարտեզներին: Ինչպես գիտենք, կան մանկապարտեզներ, որտեղ այս տարվանից սկսվելու են վերանորոգումներ և այդ մանկապարտեզներն ամբողջությամբ կփակվեն: Այս պահին արդեն իսկ կան մանկապարտեզներ, օրինակ՝ հ. 21-ը, որոնք այս համավարակի օրերին, երբ սկսեցին աշխատանքները, ծնողներին տեղեկացրեցին, որ մանկապարտեզը չի աշխատելու մինչև վերանորոգման ավարտը: Այդ մարդիկ կանգնել են փաստի առջև, որովհետև ոչ մի ձևով, նույնիսկ աշխատող ծնողներին, որևէ լուծում չի առաջարկվել:

Հիմա ես ուզում եմ հասկանալ ի՞նչ մեթոդաբանություն է մշակվել, քանի որ հետագայում ավելանալու են վերանորոգվող մանկապարտեզները: Կարծում եմ ինչ-որ համակարգային լուծման կարիք կա: Ի՞նչ մեթոդաբանություն է մշակվել, ինչպե՞ս պետք է տեղավորվեն երեխաներն այլ մանկապարտեզներում, որպեսզի խառնաշփոթ չառաջանա: Ինչպիսի՞ն է ընթացակարգը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Այս հարցի շուրջ երկար ժամանակ քննարկում ենք ունեցել և մեր տեսակետերը երբեք նույնակերպ չեն եղել: Կա երկու ճանապարհ՝ Երևանում կամ վերանորոգվում է մանկապարտեզներ կամ չի վերանորոգվում: Հիմա փորձում ենք վերանորոգել, բայց դրան զուգահեռ հնարավոր չի ունենալ այն գաղափարը, որ երեխաները պետք է հաճախեն մանկապարտեզ: Եթե մենք սկսենք և՛ վերանորոգել, և՛ երեխաներին տեղավորել այլ մանկապարտեզներ, մի շարք իրավական դրույթներ կխախտենք, որոնց ինքներդ դեմ եք:

Այսօր ունենք հերթագրված 6000-7000 երեխա, բնականաբար, պարզ է, որ մանկապարտեզներում չունենք հավելյալ 1000 տեղ, որպեսզի կարողանանք վերանորոգվող մանկապարտեզների երեխաներին ևս տեղափոխել այնտեղ: Եթե շարժվենք այս տրամաբանությամբ, որ տեղ չկա, ուրեմն պետք է ընդհանրապես վերանորոգում չարվի, իսկ

եթե վերանորոգում անենք, ապա այդ երեխաները մանկապարտեզ հաճախելու հնարավորություն պետք է չունենան: Չի կարելի վերանորոգել շենքը և միաժամանակ մի մասնաբաժնում լինեն երեխաներ, իսկ մյուս մասնաբաժնում վերանորոգման աշխատանքներ ընթանան: Դուք, բնականաբար, չեք համաձայնվի, որ մի խմբում 30-ից ավելի երեխաներ լինեն, որը հարցի լուծման մի ճանապարհ է: Այս հարցը փակուղու մեջ է:

Այո՛, եթե վերանորոգում ենք մանկապարտեզները, ապա երեխաները չպետք է գնան մանկապարտեզ, եթե ուզում են իրենց փոքրիկ քույրերն ու եղբայրներն ավելի լավ մանկապարտեզ գնան: Հակառակ դեպքում, Երևանում մոտակա մի քանի տարիներին որևէ մանկապարտեզ չպետք է վերանորոգենք, նույնիսկ ՄԱԿ-ի ծրագրով: Հստակ պահանջ կա, որ 1 տարի գոնե վերանորոգման աշխատանքները պետք է շարունակվեն, իսկ մենք ունենք մանկապարտեզներ, որտեղ 200-300 երեխա են հաճախում և չենք կարող նրանց այլ վարչական շրջաններում գործող մանկապարտեզներում տեղավորել՝ տրամաբանությունից դուրս է: Այս պարագայում մենք ուղղակի հայտնվել ենք փակուղու մեջ. կամ խախտում ենք նորմերը՝ անում ենք վերանորոգում և երեխաները գնում են մանկապարտեզ, նեղություն տալով իրենց ընկերներին, հարևաններին, բարեկամներին կամ չենք խախտում որևէ նորմ, մանկապարտեզները վերանորոգում ենք և երեխաները չեն գնում մանկապարտեզ, կամ ուղղակի չենք վերանորոգում մանկապարտեզները: Դա պետք է միասին քննարկենք, թե որ տարբերակն է Երևան համայնքի համար ավելի ընդունելի:

Աննա Ջավախյան

-Պարոն Վիրաբյան, լինելով օրենքին հետևող մարդ, ես չեմ կարող երբևէ համաձայնվել որևէ օրենքի խախտման, մանավանդ եթե այդ օրենքը չի բխում երեխաների շահերից: Դուք ցանկացած դաստիարակի եթե ասեք, որ այդ խմբում կա 33 երեխա, ավելացնենք ևս 10 երեխա, պատրաստ են աշխատել այդ պայմաններում, ապա մարդն ուղղակի ֆիզիկապես չի կարող: Այսինքն՝ մանկավարժություն ուսումնասիրող մարդը, ով գիտի, թե ինչպես է կատարվում մանկապարտեզում այդ երեխաների հետ աշխատանքը, կհասկանա, որ դա անհնար է: Դա նշանակում է երեխաների մի հատվածին մատնել անուշադրության:

Դա էր պատճառը, որ ես այսօր չեի ուզում քվեարկությանը մասնակցել, որովհետև այո՛, մենք ունենք մանկապարտեզի տարածքներ, որոնք կարող էին օգտագործվել այդ երեխաներին ժամանակավոր տեղավորելու համար: Սկզբից կարելի էր դատարկ տարածքը վերանորոգել, երեխաներին տեղավորել այնտեղ: Կարծում եմ քննարկումների արդյունքում կգտնվեն այդպիսի տարածքներ:

Ի վերջո, Կենտրոն վարչական շրջանի շատ մանկապարտեզներում երեխաների խմբասենյակը և քնասենյակը նույնն է: Այդ խնդիրը մենք չունենք այլ վարչական շրջաններում: Կենտրոնից դուրս, մյուս վարչական շրջաններում երեխաների խաղալու և քնելու սենյակներն առանձին են: Ժամանակավորապես կարող են նույնը լինել, դա այնքան կոպտագույն խախտում չէ, որ երեխայի կյանքի համար կարող է վտանգ առաջացնել: Պարոն Վիրաբյան, եթե ցանկություն ունեք, կարող ենք քննարկել: Կարող եմ խորհրդակցել նաև մասնագետների հետ, բայց կարծում էի, որ ինչ-որ բան արդեն մշակվել է:

Տիգրան Վիրաբյան

-Մենք պարոն Սարգսյանի մոտ քննարկում ենք ունեցել վարչության պետերի հետ, թե նախնական ինչպես պետք է կազմակերպենք աշխատանքները: Այնուհետև քննարկում եմ ունեցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հետ: Նախարարը նույնպես ունի բացասական վերաբերմունք ցանկացած տիպի նորմի խախտման համար: Նախարարը շատ կտրուկ է այդ հարցում և ասում է, որ տեսչական մարմնի գործողություններում որևէ զիջում չի լինելու: Այս մասով մենք հայտնվում ենք փակուղու մեջ: Չի կարող որևէ զիջում չլինել տեսչական մարմնի կողմից, երբ մանկապարտեզներում մենք հավաքում ենք ավել մարդիկ և, այնուամենայնիվ, մենք ունենանք վերանորոգված մանկապարտեզներ:

Ես Ձեզ կիիշեցնեմ, թե ինչպես է արվում դպրոցների վերանորոգումները: Դուք կհասկանանք, որ մեր աշխատանքներն այնքան էլ չեն փայլում ամբողջական նորմերի պահպանմամբ, որովհետև եթե մենք ամբողջ նորմերը սկսենք պաշտպանել, Երևանում երբեք դպրոց կամ մանկապարտեզ չի հիմնանորոգվի: Մենք անելու ենք կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ՝ 1-2 օրվա ընթացքում, իսկ տարիներով չարված հիմնանորոգման աշխատանքները մեզ այսօր կանգնեցրել են գլոբալ խնդիրների առաջ: Կան մանկապարտեզներ, որտեղ նույնիսկ հիմնանորոգումները հարցին լուծում չեն տա: Այդտեղ ուղղակի պետք է քանդել շենքը և նորը կառուցել:

Երևանի 4-5 վարչական շրջաններում կան մանկապարտեզներ, որոնք տարիների ընթացքում, եթե հիմնանորոգվեին, գուցե հիմա ենթակա լինեք նորոգման, բայց այսօր արդեն քանդման և նոր մանկապարտեզ կառուցելու ենթակա են: Եթե մենք այս զիջումներին չզնանք, և մյուս գերատեսչությունները ըմբռնումով չմոտենան, որ այս նորմերը որոշակիորեն խախտվում է, մենք աշխատանքներ կատարել չենք կարողանա: Պետք է վերանորոգվեն և հիմնանորոգվեն մանկապարտեզներ և դպրոցներ: Մենք չենք ունենալու այն հնարավորությունը, որ ամեն վարչական շրջանում 600 տեղանոց մի մանկապարտեզ կառուցենք, որ երեխաներին տեղավորենք, մյուսը վերակառուցենք, երեխաներին հետ

տանենք այնտեղ և կառուցան օգտագործենք այլ նպատակի: Մենք պետք է հասկանանք մեր հնարավորությունները, հերթագրումների մեծ թվաքանակը, ինչպես նաև այս իրավիճակից դուրս գալը, որովհետև շատ առանձնահատուկ է այդ երեխաներին այլ վարչական շրջան տեղափոխելու հարցը:

Աննա Ջավախյան

-Պետական գույքի կառավարման կոմիտեին դիմե՞լ ենք: Միգուցե ազատ տարածքներ կան, որոնք ժամանակավորապես կարող ենք օգտագործել:

Տիգրան Վիրաբյան

-Դուք շատ ճիշտ եք ասում, բայց ինքներդ էլ լավ գիտեք մանկապարտեզների առանձնահատկությունը՝ դա խոհանոցն է, առանձին պայմաններն են, սանհանգույցները: Ցանկացած շենքում այդ համակարգերն ստեղծելը բավական բարդ աշխատանք է: Այնպես չէ, որ ցանկացած շենք տիպային է և կարելի է հարմարեցնել, շահագործել որպես մանկապարտեզ:

Հայկ Մարության

-ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարն ասում է, որ չի լինելու զիջումներ, այստեղ մտածելու բան էլ չկա: Եթե գերատեսչությունն այդպես է գտնում, ապա պետք է փակենք մանկապարտեզը, որպեսզի վերանորոգենք, կամ այս դահլիճում ասեք, որ չեք ուզում վերանորոգվի: Դա էլ է լուծում:

Աննա Ջավախյան

-Այդ դեպքում ուրախ եմ, որ հարցը հնչեցրեցի, միգուցե իրոք մի լուծում գտնվի:

Հաջորդ հարցս հնչեցնեմ. այն վերաբերում է Երևան համայնքի ենթակայության տակ գտնվող արվեստի դպրոցներին: Մարտ ամսից, ինչպես գիտենք, երեխաներն անցան հեռավար ուսուցման: Այս պարագայում, երբեմն ծնողի մեղքով, հնարավոր չի եղել որոշ երեխաների դեպքում կազմակերպել այդ հեռավար ուսուցումը: Որոշ դեպքերում տեխնիկապես չկարողացան բավարարել պահանջները, կամ օրինակ՝ երեխան տանը չուներ երաժշտական գործիքներ և աշխատանքի մեծ մասը չկատարվեց: Ծնողներին հիմնականում ասվում էր, որ իրենք պետք է վճարներն ամբողջությամբ վճարեն: Ծնողներ են եղել, որ պայքարի ուղով են գնացել և հրաժարվել են վճարել, իսկ այն ծնողները, ովքեր չեն ցանկացել տնօրենին հակաճանել՝ լուռ կատարել են վճարում: Այժմ ես ուզում եմ հասկանալ ճիշտ ճանապարհը ո՞րն էր այս դեպքում:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Այս հարցն ավագանու մի քանի անդամների հետ, ում դիմել էին, քննարկել ենք: Մենք ասել ենք, որ այո՛, պետք է վարձավճարները վճարվեն: Գիտենք, որ դա նաև տեղական վճարով է հաշվարկվում և պետք է վճարվի, քանի որ այն զեղչելու տարբերակ դժվար է գտնել: Ասել ենք, որ այս շրջանում ով հնարավորություն ունի թող վճարի, ով հնարավորություն չունի՝ մենք ձևաչափը կգտնենք: Կստեղծենք առանձին ժամանակացույց, որ հետագայում քիչ-քիչ վճարելու հնարավորություն ունենան, որովհետև ուսումնական պլանով դասընթացներն ստանալու են և, բնականաբար, պետք է վճարեն ամբողջական դասընթացի համար:

Չենք կարողացել դա կիրառել ավարտական դասարանների մասով, բնականաբար, երեխան ավարտում և ստանում է իր ավարտական վկայականը: Չէր կարող որևէ ժամանակացույց կազմվեր, որ նա ավարտելուց հետո, օրինակ՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, վճարեր այս ամիսների գումարը: Հիմնականում դպրոցներն ուսումնական պլանով նախատեսված ծրագիրը կարողացել են տալ աշակերտներին: Կարծում եմ, որ այս ընթացքում ևս հնարավորություն կունենան առավելագույն ներգրավվածություն ունենալ այդ հեռավար ծրագրում: Հատկապես, որ մենք հիմա քննարկում ենք, որպեսզի դիմենք պարետատուն՝ այն գործիքները, որով անհատական պարապմունքներ են իրականացվում, թույլ տան սկսենք, որպեսզի կարողանան վերջնական փուլին հասցնել ամբողջական ուսումնական պլանը: Կարծում եմ, որ անհատական գործիքների մասով այդ խնդիրը չենք ունենա և շատ կարճ ժամանակահատվածում մեր առաջարկությունը կընդունվի: Այն ծնողները, որ վճարել են իրենց երեխաների ուսման վարձը, իրենց երեխաներն ամբողջական կրթական ծրագիրը կստանան և կյուրացնեն:

Ժամկետների առումով չենք կարողացել չգանձել ուսման վարձերը, ովքեր արդեն ավարտական դասարանում էին, իսկ մնացածի մասով անհատական մոտեցում եղել է: Արվեստի և երաժշտական դպրոցների տնօրենները քննարկել են, չենք ցանկացել, որ սա կրի համատարած բնույթ: Ցավոք սրտի, լինում են դեպքեր, երբ սկսում ես խոսել ժամկետները և վճարման կարգը փոխելու մասին: Առաջին հերթին դրանից օգտվում են այն մարդիկ, ովքեր վճարման հնարավորություն ունեն: Հիմնականում այդ գանձված գումարներից որոշակի աշխատավարձեր են գոյանում և գումարները չգանձելու դեպքում խնդիր կլինեն: Այդ անհատական մոտեցումն արվեստի և երաժշտական դպրոցների ղեկավարների վրա թողնելը կայանում էր նրանում, որ իրենք շատ լավ գիտեն, թե աշակերտներից ով է վճարունակ, ով՝ ոչ: Այնուամենայնիվ, նրանք այդ գումարները վճարելու են, մենք այդքան մեծ թվով աշակերտ-քանակով գումար զեղչելու հնարավորություն չունենք: Գումարը փուլային կկարողանան վճարել, ինչպես որ փուլային ստանում են իրենց ուսումը:

Աննա Ջավախյան

-Իրականում գեղջման մասին չէր մարդկանց անհանգստությունը, այլ որ իրենք ծրագիրը փաստորեն չեն անցել, բայց վճարումը կատարել են: Կարծում եմ, եթե վստահեցնենք, որ երեխաներն իրականում լրացնելու են այդ չկատարած պարապմունքները, ծնողների կողմից բողոք չի լինի: Ինքս անընդունելի եմ համարում ծնողից գանձել գումար՝ չմատուցված ծառայության դիմաց:

Տիգրան Վիրաբյան

-Հավելեմ, որ մենք ուղղակի չենք կարող ամբողջական ուսումնական պլանով նախատեսված պարապմունքները չիրականացնել: Անկախ նրանից դա կլինի հեռավար, թե ստացիոնար, մենք իրականացնում ենք ամբողջական ուսումնական պլանը:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ԲԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան, խնդրեմ:

Գրիգորի Երիցյան

-Առաջին հարցս վերաբերում է Օղակաձև զբոսայգուն, որի վերաբերյալ բազմիցս քննարկումներ են եղել: Ինձ հետաքրքրում է այդ մեծ այգու այն տարածքներում, որոնց մեծ մասը վարձակալությամբ տրվել է տարբեր տնտեսվարողների, կատարվել է արդյոք գույքագրում՝ պարզելու, թե տնտեսվարողները կատարում են այդ տարածքների նկատմամբ իրենց պարտավորությունները: Մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանման և կանաչապատման աշխատանքները:

Եթե նայենք զբոսայգու Աբովյան և Նալբանդյան փողոցների հատվածը, տարիներով ամայի և լքված վիճակում մի տարածք է, որը գտնվում է քաղաքի կենտրոնում: Նստարանները ջարդված են, մինչդեռ ժամանակին դա համաքաղաքացիների զբոսանքի ամենասիրելի վայրերից մեկն էր: Այգու շարունակության մասին էլ չեմ խոսում, այնտեղ ուրիշ պատմություններ կան, որոնք էլի շատ քննարկվել են: Հիմա ի՞նչ պատկեր ունենք, արդյոք բանակցում ենք տնտեսվարողների հետ, որպեսզի տարածքները վերադարձնեն կամ խզենք պայմանագրերը, կամ, վերջապես, կատարեն այն պարտավորությունները, որ իրենք ստանձնել են այդ տարածքն ստանալու պահին:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը, խնդրեմ:

Ավետ Պողոսյան

-Շնորհակալություն հարցի համար, շատ կարևոր հարց էք բարձրացնում: Այո՛, տարածքներն ամբողջովին գույքագրված են, և այնտեղ տնտեսական գործունեություն են

ծավալում 98 տնտեսվարող, որոնց կարելի է 4 կամ 5 խմբի բաժանել: Տնտեսվարողներ, որոնք ունեն գործող պայմանագրեր և պատշաճ կատարում են պայմանագրային պարտավորությունները, այդ թվում՝ վճարումները և բարեկարգման աշխատանքները: Տնտեսվարողներ, որոնք ունեն ավարտված պայմանագրեր, բայց դրանք անժամկետ գործողության մեջ են և նրանք կատարում են պայմանագրով նախատեսված պարտավորությունները: Տնտեսվարողներ, որոնք ունեն գործող պայմանագրեր և չեն կատարում պայմանագրով նախատեսված պարտավորությունները: Տնտեսվարողներ, որոնք չունեն պայմանագրեր և չեն կատարում պարտավորությունները, և տնտեսվարողներ, որոնք չունեն պայմանագրեր, բայց որոշ գործունեություն են ծավալում:

Ներկայումս գործում է հանձնաժողով, որն այս ամենը համակարգելով, փորձում է բարենպաստ պայմաններով կնքել պայմանագրերը, մյուս կողմից՝ բանակցություններով, նույնիսկ, ֆիսկալ մեթոդներով փորձում է ազատագրել այգին: Այս պրոցեսն ընթանում է, բայց ես շատ կուզենայի, որ մենք այս հարցի քննարկումից առաջ ունենայինք այն հարցի պատասխանը, թե մենք ինչ ենք ուզում ունենալ Օղակաձև զբոսայգու տեղում, ենթադրենք՝ 10-15 տարի հետո: Այդ դեպքում մենք ավելի հեշտ կկողմնորոշվենք, թե ինչպես վարվենք:

Գրիգորի Երիցյան

-Շնորհակալություն, եթե բոլորը Ձեր նման մանրամասն և փաստարկված պատասխանեն, կարծում եմ լրացուցիչ հարցեր չենք ունենա:

Երկրորդ հարցս ցավոտ թեմայի է վերաբերում, որը տարբեր նիստերին բարձրացրել եմ, բայց, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, տվյալ հարցը սրվել է: Խոսքս վերաբերում է մեր քաղաքի սոցիալական ենթակառուցվածքներին: Այս օրերին թե՛ ես, թե՛ ավագանու իմ գործընկերները, շատ ահազանգեր ենք ստանում տարբեր քաղաքացիներից, ովքեր, համավարակով պայմանավորված, հայտնվել են կյանքի դժվարին պայմաններում: Բոլոր տեսակի ճգնաժամերի ժամանակ սոցիալական խնդիրները սրվում են, և մեր քաղաքում սրվել են ոչ միայն աղքատ բնակչության տարբեր սոցիալական խնդիրները, այլև մի շարք այլ կողմնակի խնդիրներ են առաջացել: Մասնավորապես, ընտանիքում շատանում է բռնությունը երեխաների և տարեցների նկատմամբ, մեծանում է անօթևանների թիվը և այլն: Միայն վերջին 5 օրվա ընթացքում մի քանի տարեցի ենք գտել փողոցում, առանց կացարան, ընտանիքից դուրս մի իրավիճակում, երբ ընտանիքը չի համաձայնվում հետ ընդունել նրանց, որովհետև չունեն նրանց խնամքն ապահովելու ոչ մի հնարավորություն:

Օրերս ակնատես եղանք ևս մի դեպքի. երեխան ծնողի կողմից ենթարկվում էր անմարդկային վերաբերմունքի, ինչի հետևանքով երեկ պատկան մարմինների կողմից տեղափոխվեց մանկատուն: Ի՞նչ անեն այս մարդիկ: Համայնքը, ցավոք, չունի

ենթակառուցվածք, որպեսզի տարեց մարդուն ապահովի կացարանով, մինչդեռ սա ցանկացած քաղաքակիրթ քաղաքի պարտականությունն է: Եթե կարող եք, խնդրում եմ պատասխանեք, թե ու՞մ դիմեն այս մարդիկ: Ավագանու անդամներին դիմում են, մենք փորձում ենք ինչով կարող ենք աջակցել, բայց համայնքի ֆունկցիան մենք չենք կարող կատարել: Ի՞նչ խորհուրդ կտաք այն մարդկանց, ովքեր կորցնում են իրենց տանիքը և գնալու տեղ չունեն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը, խնդրեմ:

Հրաչյա Սարգսյան

-Համայնքի լիազորությունները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով: Ձեր բարձրացրած հարցի շրջանակներում համայնքն անելիք չունի: Դա կարող է արվել կամավոր լիազորությունների շրջանակներում, որն իրագործելու համար բյուջեում համապատասխան տող պետք է նախատեսվի: Ձեր նկարագրած բոլոր խնդիրները գտնվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասության շրջանակում: Չնայած դրան, Վարդաշենում կա անօթևաններին օգնող «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամը, տարեցներին աջակցող «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը, որոնց համայնքն աջակցում է իր կամավոր լիազորությունների շրջանակներում:

Գրիգորի Երիցյան

-Շնորհակալություն, ես կարող եմ առաջարկ անել. ամեն տարի բյուջեով նախատեսել, որ համայնքային կացարանի աշխատանքը պատվիրակել մասնավոր ընկերության, որը կընդունի տարեկան 200-250 անօթևանի, իսկ համայնքային սոցիալական աշխատողները պետք է հետևեն, որ այդ մարդիկ հետ վերադառնան նորմալ կյանքին, կարողանան աշխատեն և դասավորեն իրենց կյանքը: Մեր համաքաղաքացիների խնդիրները նաև մեր խնդիրներն են: Եկեք մտածենք այն ուղղությամբ, թե ինչպես ենք այս հատվածը տեղավորում մեր սոցիալական ռեֆորմների փաթեթի մեջ և դրա համար նախատեսենք գումար, որը մեծ հարցեր կլուծի թե՛ մեր, թե՛ պետության համար:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սիփան Ասատրյան, խնդրեմ:

Սիփան Ասատրյան

-Բոլորս ենք հիշում նախորդ նիստի հարց ու պատասխանի ժամանակ խոսվեց Երևանի քաղաքապետարանի գլխավոր մասնաշենքի և վարչական շրջանների

ղեկավարների աշխատակազմերի շենքերի մուտքերը թեքահարթակով կահավորելու մասին: Ինչպես նաև խոսք գնաց հաշմանդամություն ունեցող անձանց անվճար հատկացվող ավտոկայանատեղիների վերաբերյալ: Հաջորդ օրը տեսանյութ հրապարակվեց, որ Դուք խորհրդակցություն եք հրավիրել: Կցանկանայի իմանալ, թե ի՞նչ արդյունքներ ունենք այդ երկու ուղղությամբ, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հարցի առաջին մասով հանձնարարական էր տրվել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետին: Քաղաքապետարանի գլխավոր շենքի մասով էսքիզային նախագիծը հաստատել եմ: Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Մեդոյանը կներկայացնի, թե ինչ փուլում են աշխատանքները:

Անդրանիկ Մեդոյան

-Գործակարգավարական խորհրդակցությունից հետո հանձնարարականի վերաբերյալ շրջաբերական պատրաստվեց: Աշխատակազմի քարտուղար պարոն Խաչատրյանի հետ կազմակերպեցինք, որպեսզի հանձնարարականն ուղարկվի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմ: Հանձնարարականի կատարման պատասխանատուն աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունն է: Այս պահին տարածքը չափագրվել է՝ սկսած լուսացույցից մինչև շենքի սկզբնական աստիճաններ:

Խնդիրն ավելի շատ քննարկման կարիք ունի շենքի դիմային հատվածի հետ կապված, քանի որ ստանալու ենք մի թեքություն, որը նորմատիվային ցուցանիշներին համապատասխանեցնել լիարժեք չի ստացվի, որովհետև շենքի ճարտարապետական հորինվածքը կխաթարվի: Խնդիրը հետևյալն է. քննարկել և ստանալ այնպիսի լուծում, որով շենքի ճարտարապետական կերպարի մաքսիմալ քիչ ձևափոխումներ լինի: Հաջորդ քննարկմանը Ձեզ լիարժեք կզեկուցենք և կհասկանանք, թե որ ընթացքով ենք գործելու:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, վարչական շրջանների մասով հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վահե Խաչատրյանը:

Վահե Խաչատրյան

-Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր շրջաբերականն ուղարկել է: Վարչական շրջանների ղեկավարներից ստացված պատասխանների համաձայն՝ միայն Նուբարաշեն, Դավթաշեն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների վարչական շենքերը չունեն թեքահարթակներ:

Հայկ Մարության

-Շատ լավ, պարոն Սեդոյան, խնդրում եմ այդ 3 վարչական շրջանների շենքերի մասով էլ հետազոտություն անել և քննարկման օրը դա նույնպես ներկայացնեք: Հարցի երկրորդ մասին, կապված ավտոկայանատեղիների հետ, կպատասխանի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

Էդգար Գալստյան

-Պարոն քաղաքապետ, Ձեր հանձնարարականից հետո անմիջապես համապատասխան գրություններ են ուղարկվել: Բանակցություններ են սկսվել «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և ճանապարհային ոստիկանության հետ, որպեսզի հնարավորինս ավելացնենք հաշմանդամություն ունեցողների համար նախատեսված տեղերը, ինչպես նաև որոշակիորեն փոփոխենք գծանշման ձևը: Այսօր գործող կարգի համաձայն՝ կա նորմ, որը մեզ հնարավորություն է տալիս ավելի լայն տարածք վերցնել հաշմանդամի մեքենայի կայանման համար, որպեսզի հաշմանդամը հնարավորություն ունենա սայլակն ավելի հեշտությամբ իջացնելու կամ տեղադրելու մեքենայի մեջ: Այժմ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և ճանապարհային ոստիկանության հետ տանում ենք գույքագրման աշխատանքներ, որպեսզի առաջիկայում կատարենք համապատասխան գծանշումներ և ճանապարհային նշանների տեղակայում:

Միփան Ասատրյան

-Երկրորդ հարցս կրկին մատչելիությանն է վերաբերում: Բոլորս սպասում ենք երկու խոշոր իրադարձության՝ 100 ավտոբուսների հայտնվելը քաղաքում և 500 վերելակների փոխարինումը: Լավ լուր իմացա, որ այն շենքերում, որտեղ բնակվում են հաշմանդամություն ունեցող անձինք, վերելակների փոխարինման հարցում տրվելու է առաջնություն, ինչպես նաև 86 վերելակ է փոխվելու, որից կկարողանա օգտվել հաշմանդամություն ունեցող մոտ 156 անձ, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում: Կցանկանայի մի քանի տեխնիկական մանրամասներ իմանալ թե՛ ավտոբուսների, թե՛ վերելակների վերաբերյալ: Ի՞նչ ենք անելու, որ վերջիններից օգտվելը հաշմանդամների համար լինի հնարավորինս մատչելի: Հաշվի առնվել են արդյոք մայթերի բարձրությունը, կամ վերելակների առումով՝ ռուսական և բելառուսական վերելակները հնարավորություններ չեն ընձեռում նեղ հորաններում լայն վերելակներ տեղադրելու, քան եվրոպական արտադրության վերելակները: Մի փոքր մանրամասներ կցանկանայի լսել այս տեխնիկական նկարագրերի վերաբերյալ:

Հայկ Մարության

-Վերելակների հետ կապված ասեմ, որ կատարող ընկերություններն ունեն տեխնիկական բնութագիրը, իրենց պարտավորությունն է գործել ըստ դրա: Ավտոբուսների հետ կապված կպարզաբանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգսյանը, խնդրեմ:

Հրաչյա Մարգսյան

-1100-ից ավել կանգառներում գույքագրումն իրականացրել ենք, հիմնականում՝ 80-90%-ի դեպքում, պատվիրված ավտոբուսները կհամապատասխանեն կանգառներին: Ավտոբուսներում լինելու է հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար համապատասխան սարքավորում, որն աշխատելու է մեխանիկորեն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Առաջին հարցը վերաբերում է հանրային տարածքները՝ այգիները, մայթերը, հանրային գոտիները համայնքին վերադարձնելու գործընթացին: Կան հանրային տարածքներ, որոնք տարիներ շարունակ ապօրինաբար զավթել են և օգտագործում են: Ազատության հրապարակի հարակից այգու առաջնային հատվածում ապամոնտաժվել են մի շարք օբյեկտներ: Ե՞րբ է նախատեսվում նշված տարածքում իրականացնել ամբողջական ապամոնտաժման աշխատանքներ և ե՞րբ է նախատեսվում մեկնարկել Ազատության հրապարակի էսթետիկ տեսքի վերականգնման գործընթացը:

Հայկ Մարության

-Ձեր կողմից նշված ուղղություններով կա երկու գործողություն. առաջինը՝ Ազատության հրապարակի հարակից այգու տարածքում ապամոնտաժման աշխատանքներն են, երկրորդը՝ այդ ամենը կանոնակարգելու հարցն է: Հարցի հետ կապված հրավիրել եմ խորհրդակցություն և հանձնարարականներ եմ տվել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետին: Հարցի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

-Ինչ վերաբերում է Ազատության հրապարակի բարեկարգման նախագծին, տեղեկացնեմ, որ նախագծի վերաբերյալ տրվել էր հայտարարություն: Այգու հարակից մայթերի՝ Մաշտոցի-Մայաթ-Նովայի պողոտաների հատվածում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար հայտարարվել էր առանձին մրցույթ: Բարեկարգման աշխատանքների շրջանակներում նախատեսվում էր ճաղավանդակների,

հենապատի, եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ: Նախագծի էսքիզային տարբերակը համաձայնեցվել է Ձեզ հետ: Հայտնի է նաև նախագծող ընկերությունը և աշխատանքները շարունակվում են:

Ինչ վերաբերում է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և Գարապի լճի հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներին, նշեմ, որ քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից հայտարարվել էր նախագծման մրցույթ: Ձեր հանձնարարականի համաձայն՝ լավ նախագծման աշխատանքներ իրականացնող ընկերությունը որպես խրախուսանք կստանար 3 միլիոն դրամ, սակայն քսան օր առաջ նախագծման համար հայտարարված մրցույթի ժամկետն ավարտվել է և մասնակից չի եղել:

Հայկ Մարության

-Պարոն Հարությունյան, եթե նախագծման համար հայտարարված մրցույթի ժամկետն ավարտվել է քսան օր առաջ, ապա դրանից հետո ի՞նչ է արվել:

Գրիգոր Հարությունյան

-Մրցութային հանձնաժողովի համար կա քննարկման վերջնաժամկետ, սակայն ոչ որ չի դիմել:

Հայկ Մարության

-Պարոն Հարությունյան, այսինքն դա նշանակում է, որ խրախուսանք հայտարարված գումարը քի չ է:

Գրիգոր Հարությունյան

-Այո, պարոն քաղաքապետ:

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հաշվի առնելով, որ բյուջեն հաստատվում է Ձեր կողմից, խնդրում եմ ներկայացնել Ձեր առաջարկները:

Արման Անտոնյան

-Պարոն քաղաքապետ, ենթադրում եմ հայտարարված մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունը լայն շրջանակներում չի տարածվել և այդ պատճառով մասնակիցներ չեն եղել:

Հայկ Մարության

-Պարզաբանում կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Իոսիֆ Կուրասյանը:

Իռսիֆ Կուրատյան

-Մրցույթի վերաբերյալ հայտարարության տարածումից հետո, մի քանի ճարտարապետ արձագանքեցին: Նրանք նշեցին, որ խրախուսանքի համար նախատեսված երեք միլիոն գումարը քիչ է: Որպես համեմատություն ներկայացվեց քարոզարշավի լոգոյի համար հայտարարված մրցույթը, որի դեպքում ևս երեք միլիոն գումար էր նախատեսված:

Հայկ Մարության

-Պարոն Կուրատյան, խնդրում եմ այս հարցերի վերաբերյալ վաղը խորհրդակցություն կազմակերպել:

Հարցի երկրորդ մասի՝ Ազատության հրապարակի էսթետիկ տեսքի վերականգնման գործընթացի մասին տեղեկացնեմ, որ «Երևանի կառուցապատման ներդրումային ՕԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի և քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Մուրադյանի հետ համատեղ հարցը քննարկվել է: Ինձ կներկայացվի տեղեկանք, որից հետո կսկսեն իրականացվել որոշակի գործողություններ և արդյունքների մասին Ձեզ կտեղեկացվի:

Արման Անտոնյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող անավարտ կառույցի՝ Երևանի հեծանվահրապարակի արդյունավետ գործունեությանը և դրա պահպանման համար տրամադրված գումարներին ու ծախսերին: Ավագանու մի խումբ անդամների կողմից առաջարկվել է կառույցն արդյունավետ օգտագործելու նպատակով ստեղծել համայնքային մարզադպրոց: Խնդրում եմ պարզաբանել Երևանի հեծանվահրապարակի արդյունավետ կառավարման և ճիշտ օգտագործման համար ի՞նչ աշխատանքներ են տարվում:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Բարձրացված հարցը իմ կողմից համակարգվող ոլորտի հետ քիչ է առնչվում, քանի որ Երևան համայնքի ենթակայության մարզադպրոց չէ: Հարցը համայնքի սեփականության գույքի և գույքի պահպանման մասին է: Չեմ կարծում, որ այսօր Երևան համայնքը հնարավորություն ունի և կարևորում է նոր կազմակերպություն հիմնելը ու հավելյալ միջոցներ ներդնելը: Երևան համայնքի ենթակայության մարզադպրոցներում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք շուտափույթ լուծման անհրաժեշտություն ունեն: Ես չեմ կարող խոսել սպորտի ոլորտից և չներկայացնել Շենգավիթի մարզադպրոցի վատ վիճակը: Հազարավոր երեխաներ ամենավատ պայմաններում զբաղվում են սպորտով: Համայնքային

ենթակայության նման վիճակում գտնվող մարզադպրոցի առկայության պարագայում, մտածել նոր մարզադպրոց հիմնելու և հավելյալ գումարներ ներդնելու մասին, գտնում եմ՝ սխալ է:

Չեմ ցանկանում անդրադառնալ նախորդ տարիներին գույքի պահպանման համար հայտարարված մրցույթներին, որովհետև իմ կողմից համակարգվող բաժնի կողմից մրցույթ չի հայտարարվել: Այս տարի գույքի պահպանման մրցութային փաթեթը կկազմվի վեց ամսվա համար: Մրցութային փաթեթը ճիշտ կազմելու, մրցույթի բարձրակարգ պայմաններ ունենալու համար խորհրդատվության տրամադրելու նպատակով կհրավիրվեն մասնագետներ, որ ամբողջ մարզական համալիրը չտուժի: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժինը նշված կառույցում իրականացրել է ուսումնասիրություն և տրվել է եզրակացություն, որը կարող եմ տրամադրել: Եզրակացության մեջ նշված է, թե ինչպես են օգտագործվել վճարված գումարները:

Հաշվի առնելով եզրակացությունը և համապատասխան բաժնի ուսումնասիրությունները, մենք վճարված գումարների մասով գնահատական տալ չենք կարող: Խնդրում եմ ծախսված գումարների անարդյունավետության վերաբերյալ այլ տեղեկատվության առկայության դեպքում այն փոխանցել, որպեսզի կատարվեն ուսումնասիրություններ: Նշված կառույցում համայնքը որևէ սպորտային միջոցառում կազմակերպելու հնարավորություն չունի, քանի որ մարզադպրոցն իր գործունեությամբ առանձնահատուկ է և այլ ուղղությամբ օգտագործելու հնարավորություն չկա: Մարզադպրոցը բարձրակարգ է և վերապրոֆիլավորելու անհրաժեշտություն չկա: Մարզադպրոցի ղեկավարության հետ կազմակերպվել է հանդիպում և ներկայացվել է մեր դիրքորոշումը, որ մրցութային կարգն այլ տարբերակ չունի:

Ես կարծում եմ, որ նման կառույցներում, որտեղ կան մասնագիտական շերտեր, տվյալ սպորտաձևին բնորոշ մարզագույք, որն ունի հատուկ պահպանության կարիք, հետագայում ավելի մեծ վնասներ չկրելու համար ճիշտ կլինի գնումն իրականացնել ուղիղ ձևով: Քննարկումների արդյունքում, ընտրվել է այն տարբերակը, որ պետք է հայտարարվի մրցույթ: Կփորձենք մրցութային պայմանները ներկայացնել բարձր որակով և չափանիշերով, որ շահող կազմակերպությունն ունենա սպասարկման համար լիիրավ հնարավորություն և պրոֆեսիոնալիզմ: Կան նաև փոսալցման աշխատանքներ, որը կարող է կատարել ցանկացած շինարարական կազմակերպություն: Փայտի պահպանման խնդիր կա, որը պետք է իրականացնի համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող կազմակերպությունը:

Հայկ Մարություն

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը:

Հայկ Մարգարյան

-Պարոն Անտոնյան, տեղակացնեմ, որ նախորդ մրցույթին մասնակցել են երկու ընկերություն, որից մեկը՝ շահող ընկերությունն էր, մյուսը՝ Ձեր կողմից խորհուրդ տրված ընկերությունն էր: Վերջինս պարտվել էր փաստաթղթերի ոչ բավարար լինելու պատճառով, չնայած նրան, որ առաջարկվել էր չնչին ցածր գին:

Արման Անտոնյան

-Ես առաջին անգամ լսեցի, որ իմ կողմից ինչ-որ ընկերության մասին խորհուրդ է տրվել:

Հայկ Մարգարյան

-Պարոն Անտոնյան, դրա մասին մենք միասին ենք խոսել: Դուք 5-րդ անգամ բարձրացնում եք համայնքային նոր կազմակերպություն ստեղծելու հարցը: Ես բազմիցս նշել եմ, որ համայնքային կազմակերպությունը գույքի բազայի վրա չի ստեղծվում: Համայնքային կազմակերպությունն ստեղծվում է սովյալ ոլորտի անհրաժեշտությամբ և ապահովվում է համապատասխան գույքով: Մենք ունենք գույք, որը պետք է կառավարել: Գույքի կառավարումն ենթադրում է երկու տարբերակ. գույքի պահպանում՝ կոչվում է կոնսերվատիվ կառավարում և գույքի վարձակալություն կամ օտարում՝ կոչվում է ակտիվ կառավարում: Մենք նախընտրել ենք գույքի կոնսերվատիվ կառավարումը, որովհետև ակտիվ կառավարումը ենթադրում է վարձակալության իրավունքի վաճառք, տնտեսապես հետաքրքիր չէ: Վարձակալությամբ տրամադրման դեպքում պետք է առաջարկենք առնվազն քառասուն միլիոն դրամ հատուցել, որը ծախսում ենք պահպանման համար: Ինչպես նաև պետք է առաջարկենք փոխհատուցել գույքի օգտագործման մաշվածության գումարը:

Պարոն Անտոնյան, եթե գտնեք որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որ կառաջարկեն տարեկան ավելի քան 60 միլիոն դրամ գումարով վարձակալել այս շենքը, մենք պատրաստ ենք առաջարկը քննարկել: Ստեղծել նոր ՀՈԱԿ, նշանակում է այդ 49 միլիոն պահպանման ծախսին ավելացնել ևս բյուջետային հիմնարկի ձևավորման ծախս, որովհետև պետք է վճարել աշխատավարձ: Արդունքում մյուս մշակութային օջախների և հիմնարկների մասով կկրենք վնաս:

Արման Անտոնյան

-Պարոն Մարգարյան, Դուք սխալ և թյուր տեղեկատվություն եք բարձրաձայնում: Տենդերի մասնակցության համար ես որևէ ընկերություն չեմ առաջարկել: Սմիսներ շարունակ

հորդորել եւ դադարեցնել մրցութային գործընթացը, ուսումնասիրել տենդերների պայմանագրերը, տեխնիկական չափորոշիչները, փաստաթղթերը: Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը տեխնիկական բնութագրերում տեսել է խնդիր: Իմ կողմից բարձրացված հարցը վերաբերում է գույքի պահպանմանը: ՀՈԱԿ-ի ստեղծումը թույլ կտա, որ տվյալ շենքն օգտագործենք նպատակային:

Հայկ Մարության

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Պարոն Անտոնյան, հաշվի առնելով, որ Դուք ղեկավարում եք նույնատիպ գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպություն, ուստի՝ ճիշտ կլիներ հեծանվասպորտով զբաղվող մեկ այլ ֆեդերացիայի վերաբերյալ հարցերը բարձրացվի Ձեր մյուս գործընկերների կողմից: Ձեր կողմից ղեկավարվող հասարակական կազմակերպությունը դիմել էր համայնքին՝ աջակցություն ստանալու համար և համայնքը մերժել էր: Կարծում եմ նպատակահարմար կլինի նմանատիպ հարցերը բարձրացվեն այն մարդկանց կողմից, ովքեր տվյալ գործունեության հետ առնչություն չունեն և Ձեր կազմակերպության կամ Ձեր կողմից չեն կարող դիտարկել որևէ շահ:

Համայնքը նման հարցերով զբաղվում է շատ հստակ: Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանի հետ քննարկել ենք բոլոր պայմանները: Կան պայմաններ, որոնք վերանայման անհրաժեշտություն ունեն: Կատարվել է ուսումնասիրություն, որի հիման վրա ընդունվել է որոշում՝ մի քանի կետերում փոփոխություններ կատարելու մասին, որը արվել է: Անցյալ տարի փոփոխություն չկար, որովհետև աուդիտ չէր արվել: Աուդիտի արդյունքում տրված եզրակացության մեջ կան կետեր, որոնցով առաջարկվել էր փոփոխություններ անել մրցութային պայմանների մեջ: Մրցութային պայմանների փոփոխությունը ներառել ենք նոր պայմաններում: Բնականաբար, նախորդ տարի չկար աուդիտի արդյունքում տրված ուսումնասիրություն արդյունքները, ուստի՝ այդ կետերը չէին կարող ի հայտ գալ:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էոնեստ Ավանեսով, խնդրեմ:

Էոնեստ Ավանեսով

-Խնդրում եմ, որպեսզի բնակիչների, մանկապարտեզների երեխաների, նրանց ծնողների և աշխատակիցների համար մեկ անգամ հնչեցվի, թե համավարակի հետ կապված մանկապարտեզի մեկ աշխատողին օրական քանի՞ դիմակ, ձեռնոց և բախիլ պետք է տրամադրել: Ահազանգ ունեմ մանկապարտեզից, որ տնօրենը, միգուցե, խնայում է և

ամբողջությամբ չի տրամադրում աշխատողներին հասանելիք այդ պարագաները: Հաճախ լինում են դեպքեր, երբ որոշ այդպիսի պարտավորություններ դրվում են չնչին աշխատավարձ ստացող աշխատողների ուսերին: Ուզում եմ իմանալ նաև տրամադրվում են կամ կտրամադրվեն այդ միջոցները սպորտդպրոցներին, թե՛ ոչ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն հարցի համար, պարոն Ավանեսով: Մենք արդեն մի շաբաթ է քննարկում ենք այդ թեման: Քաղաքապետարանի պաշտոնական կայքի և լրատվամիջոցների միջոցով տեղեկացրել ենք: Ես և պարոն Մարգարյանն այդ մասով ասուլիս ենք ունեցել: Քաղաքապետարանի կողմից գնում արվել է երկու շաբաթվա հաշվարկով, որովհետև կարծել ենք, որ սա մի փուլ է, եթե որևէ խնդիր չառաջանա և շարունակենք աշխատել նույն ձևով, կսկսենք հունիս ամսվա համար գնում անել: Երևանի քաղաքապետարանի ենթակայության բոլոր 161 մանկապարտեզների հաշվարկով գնումն արված է մայիս ամսվա համար:

Բոլոր մանկապարտեզների համար գնվել են հեռահար ջերմաչափեր, 4300 աշխատակցի համար գնվել են դիմակներ: Յուրաքանչյուր աշխատակցի համար օրական 2 դիմակ, չնայած գիտենք, որ աշխատակիցների մոտ 20 տոկոսը, ովքեր գտնվում են ռիսկային խմբում կամ ունեն խրոնիկ հիվանդություններ, աշխատանքի չեն գնում: Գնվել են նաև մեծ քանակությամբ ախտահանիչ նյութեր, խոհանոցում աշխատողների համար՝ ձեռնոցներ: Բախիլներ գնվել են քիչ քանակությամբ, քանի որ դրանց անհրաժեշտությունը մեծ չէ: Ուզում եմ ևս մեկ անգամ տեղեկացնել մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողներին և բոլոր աշխատակիցներին, որ հակահամաճարակային կանոնները պահպանալու որևէ պարագայի պակաս մանկապարտեզները չունեն: Այն մանկապարտեզների տնօրենները, ովքեր ծնողներից կամ աշխատողներից կպահանջեն որևէ պարագա, խստիվ կպատժվեն:

Էռնեստ Ավանեսով

-Շնորհակալություն, երկրորդ հարցս կապված է «Ակտիվ քաղաքացի» նախագծի հետ. այն վերաբերում է Եռաբլուրում հերոսների ծառուղու իրականացմանը: Իմ գրավոր հարցմանը Ձեր կողմից պատասխանվել է, որ բանակցություններ են ընթանում ՀՀ պաշտպանության նախարարության հետ, սակայն կցանկանայի մանրամասնեք, թե ի՞նչ խնդիր կա, և ի՞նչ փուլում են գտնվում բանակցությունները:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Իոսիֆ Կուբատյանը, խնդրեմ:

Իռսիֆ Կուբատյան

-ՀՀ պաշտպանության նախարարությունից մեզ պատասխանել են, որ այդ տարածքն իրենց հաշվեկշռում է, այնտեղ կա ռոտման խնդիր: Մինչև այդ հարցը չլուծվի, նպատակահարմար չէ այնտեղ ինչ-որ աշխատանք ձեռնարկելը: Նիստից հետո կարող եմ ներկայացնել մանրամասն գրագրությունները:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Ինձ է դիմել plug.am ծրագրի ղեկավարը: Նրանք, ևս երկու կազմակերպությունների ֆինանսավորմամբ, Հայաստանում էլեկտրական մեքենաների լիցքավորման 25 կայան կառուցելու, որից՝ 5-ը Երևան քաղաքում, ծրագիր են նախատեսում:

Պարոն քաղաքապետ, Ձեր հանձնարարությամբ, զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետը զբաղվել է այս հարցով և նույնիսկ քաղաքապետարանն առաջարկել է, որ դրանք լինեն 7-ը, ոչ թե 5-ը: Այդ փուլը, կարծես թե, նորմալ անցել է: Դրանից հետո ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից արդեն գործընթացն ինչ-որ պատճառներով կանգ է առել և մինչև հիմա այդ խնդիրը չի լուծվել:

Ես, իհարկե հասկանում եմ և չեմ բացառում, որ ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը կոնկրետ խնդիրներ է առաջադրել, որի պատճառով նաև այս գործընթացը կանգ է առել: Ես ուզում եմ հասկանալ պատճառները, կարծում եմ, որ լավ կլիներ այդ ծրագրի ղեկավարությանը կամ պատասխանատուին հանդիպման հրավիրել: Այդ ծրագիրը հիանալի ծրագիր է, մենք բոլորս էլ գիտենք էլեկտրամոբիլների կարևոր նշանակությունը հատկապես մեր քաղաքում, որտեղ օդի աղտոտվածությունն այդքան բարձր է: Ոչ թե միայն նամակով պատասխան տրամադրեն, որ այստեղ խնդիրներ են տեսնում, այլ օգնեն, սովորեցնեն, հուշեն օրինական ճանապարհը, թե ինչպես կարող են հասնել նրան, որ Երևան քաղաքում տեղադրվեն էլեկտրական մեքենաները սնուցող սարքեր: Ի դեպ ասեմ, որ ծրագրի ղեկավարն ինձ ասել էր, որ առաջին երկու տարին լինելու էր անվճար:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Մհեր Աղաբեկյանը:

Մհեր Աղաբեկյան

-Պարոն քաղաքապետ, ներկա պահին այդ գործի մանրամասները չեմ հիշում, բայց նման խնդիր եղել է: Մենք տարբեր խնդիրներ ենք առաջադրել՝ թե այդ կայանների հոսանքի աղբյուրը որտեղի՞ց է լինելու, ի՞նչ հզորությամբ պետք է լինի:

Պարոն Զաքարյան, եթե գրությունը Ձեզ մոտ կա, ապա գրության մեջ այս բոլորը պետք է նշված լինի:

Հայկ Մարության

-Խնդիրը հոսանքի^օ հետ է կապված եղել:

Մհեր Աղաբեկյան

-Պարոն քաղաքապետ, դրանք համապատասխան տեխնոլոգիա ունեն, ամեն տեղ դա չի կարող տեղադրվել: Դա ենթադրում է, որ պետք է ստորգետնյա ենթակառուցվածքներով բերեն՝ փողոցը քանդեն և անցկացնեն հոսանքը:

Հայկ Մարության

-Ուզում եմ հասկանալ, մենք գտել ենք, որ պետք չի^օ Երևանում դա անել:

Մհեր Աղաբեկյան

-Առաջարկ էր եղել Ազատության պողոտայում՝ այգու կողքը տեղադրել: Այնտեղ երկու տեղի մասով ասել ենք, որ հնարավոր է, բայց այդ խնդիրները պետք է լուծել: Համապատասխան ստորաբաժանումներից թույլտվությունները պետք է լինեն, որպեսզի դրանից հետո ընթացքը տրվի և հողհատկացման խնդիրները դիտարկվեն:

Հայկ Մարության

-Արձանագրելու համար ճշտենք, թե փաստացի մենք իրենցի^օց պետք է սպասենք այդ տեղեկատվությունը, թե^օ մենք պետք է հավաքագրենք: Այսինքն իրենք առաջարկեին վայրերն այդ 5 հատի համար և ասեն թե ինչ է պետք, մենք ասենք այո կամ ոչ, թե^օ մենք էլ պետք է առաջարկենք տեղեր:

Մհեր Աղաբեկյան

-Դա հատուկ տեխնոլոգիա է, եթե այդ կազմակերպությունը նման գործառույթով զբաղվում է՝ պետք է հետաքրքրված լինեին այդ ամենով: Մենք պատրաստ ենք քննարկել: Առաջարկները կա, մենք մի քանի նմանատիպ առաջարկներ ունեցել ենք, պարզապես հիմա չգիտեմ, որի մասին է խոսքը:

Հայկ Մարության

-Որտե^օ դ է կանգ առել գործընթացը:

Մհեր Աղաբեկյան

-Գործընթացը կապված է այն տեխնոլոգիայի հետ, որ եթե առաջարկում են տեղադրել կայանները, իրենք պետք է համապատասխան հետազոտություններ անեն այդ մասով, որովհետև կոնկրետ տեղեր են առաջարկում: Պետք է ներկայացնեն այդ վայրերի համար տեխնիկական պայմանները: Ըստ այդ պայմանների որոշում կկայացնենք հնարավոր է այդ տեղում նախատեսել, թե ոչ:

Լևոն Զաքարյան

-Ճիշտն ասած կուզեի խնդիրներ չառաջացնեիք: Ես կոնտակտային տվյալները և մուտքագրման համարը կփոխանցեմ պարոն Ադաբեկյանին: Խնդրանքս հետևյալն է. այս մարդիկ լավ ծրագիր են իրականացնում, կարելի է իրենց օգնել, նաև մի քիչ մեր գործառույթներից դուրս գալով, որովհետև քաղաքի համար լավ բան են անում:

Մհեր Ադաբեկյան

-Մենք, ինչպես գիտեք, կապ հաստատելու մասով միշտ պատրաստ ենք և երբեք չենք խուսափել նման խնդիրներից:

Լևոն Զաքարյան

-Հաջորդ հարցս կապված է Մաշտոցի պուրակի սկզբնամասում վերակառուցվող սրճարանին: Երեկ եղել էմ տեղում, խնդրել էմ ինչ-որ ձևով միջամտություն անեն, որովհետև այնտեղ առանց ծառերի մասին տեղեկատվության՝ տրվել էր շինթույլտվություն: Ծառերն ամբողջովին վնասվել էին, որի արդյունքում ստիպված են եղել երեք ծառ կտրել: Մենք հետևողական չենք եղել, չենք գնացել գոնե մեկ անգամ տեղում նայենք ու հասկանանք այդ խնդիրը: Շինթույլտվություն է տրվել առանց ծառերի մասը նշելու, այդ մարդիկ դիմել են ևս 4 ծառ կտրելու համար: Երեկ՝ ես, Գայանե Մելքոն Մելքոնյանը և բնապահպանության վարչության ներկայացուցիչը եղել ենք տեղում: Մեծ հույս ունեմ, որ ևս 4 ծառ կտրելու համար կառուցապատողին կմերժեն:

Հարցս հետևյալն է, որ խնդիրը բարձրացնում ենք, ինչու՞ չեն գնում և ասում, որ չի կարելի ծառ կտրել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի Ժ/պ Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Մի փոքր անդրադարձ կատարեմ տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերի մասով: Նախագծման թույլտվությունը տրամադրվել է 2019թ. հուլիսին և եղել է քաղաքապետի որոշմանը կից, որովհետև այնտեղ նախատեսված էր կառուցապատման իրավունքի և հատկացված գույքերի որոշակի սահմանների փոփոխություն: Մենք այս հարցով երկար քննարկում ենք ունեցել նաև Գայանե Մելքոն Մելքոնյանի հետ, հանդիպումներ է եղել նաև «Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանության» ՀՈԱԿ-ում: Խնդիրն այսպիսին էր. թույլտվությունը տրամադրվել է բացառապես, կարելի է ասել, հողամասային հատվածով, ըստ ճարտարապետական նախագծի՝ ի շահ համայնքի:

Այսպես եմ ասում, որովհետև հատկացված հողամասերը, որոնք առկա էին նախորդ սրճարանի սպասարկման համար, մակերեսներով շատ ավելի մեծ էին, քան ներկայումս ինչ-որ նախատեսվում է: Համաչափության սկզբունքով բերել է որոշակի տեսքի՝ թե՛ ծավալային առումով, թե՛ հողամասերի սիմետրիկ հորինվածքի առումով: Ծառերի վերաբերյալ կցանկանամ նշել. քանի որ այն վերակառուցում էր բացառապես գոյություն ունեցող սահմաններից ավելի փոքր սահմաններում, դրա համար ծառերին անդրադարձ չի արվել: Կառուցապատողի հետ գրույցի ժամանակ, նա ասաց, որ երկու ծառ է եղել, դեռևս նախորդ սրճարանի ժամանակ, որոնք եղել են սրճարանի հենց միջնամասում: Այդ ծառերը պահպանվելու են: Մյուս ծառերի կտրման վերաբերյալ, թույլտվություն կտրվի, թե կմերժվի չեմ կարող ասել:

Հայկ Մարության

-Պարոն Սեդոյան, այսինքն ստացվում է, որ շինությունը, որը պետք է լինի՝ ավելի փոքր ծավալների մեջ է, քան նախորդը և դրա համար անդրադարձ չի արվել:

Անդրանիկ Սեդոյան

-Այո, երկու ծառը, որոնք գոյություն են ունեցել, կառուցապատողի խոսքով, մնալու են իրենց տեղերում: Քանի որ վերակառուցում էր նախատեսված՝ ծառերի մասով անդրադարձ չի արվել:

Հայկ Մարության

-Ծառերի մասով տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժ/պ Գևորգ Նավասարդյանը:

Գևորգ Նավասարդյան

-Ինչպես նշեց պարոն Զաքարյանը, երեկ նաև բնապահպանության վարչության աշխատակիցն է եղել տեղում: 4 ծառի հետ կապված՝ տնտեսվարողը պատրաստ է սրճարանից դուրս գտնվող 2 ծառը փոխարինել ավելի բարձրարժեք ծառերով, քանի որ դրանք թեղի տեսակի ծառեր էին, որոնք շուտ են միջատներով պատվում: Այստեղ գործում է Երևանի ավագանու 18.11.2009թ. հ.36-Ն որոշումը, որի հավելվածի 5-րդ մասը վերաբերում է փոխհատուցվող կանաչապատմանը: Եթե տնտեսվարողը վնասել է, նա իր միջոցների հաշվին պետք է վերականգնի այդ կանաչ տարածքը: Այդ 2 ծառի մասով առաջարկ է եղել տնտեսվարողին, որպեսզի այդ պուրակի հատվածում կատարի բարձրարժեք թփապատում՝ մոտ 300 գծամետրի սահմաններում:

Հայկ Մարության

-Տնտեսվարողը, որ դիմել է 4 ծառ կտրելու համար, Դուք ստացե՞լ եք այդ գրությունը:

Գևորգ Նավասարդյան

-Այդ 4 ծառի մասին էի ասում:

Լևոն Զաքարյան

-Այդպես չէ: Արդեն կտրել է 3 ծառ և հիմա 4-ի համար է դիմել: Բնապահպանության վարչության ներկայացուցիչն ասաց, որ պետք է խորհրդակցի, քանի որ ոչ որակյալ տնկիներ են: Բանավոր պայմանավորվածությամբ նման գործընթացներ չեն իրականացվում, եթե կա պայմանագիր: Պարզապես այդ ծառերը պետք է մնան այդ տարածքում, բայց եթե մարդու մոտ նման ցանկություն է առաջացել, հավանաբար, հետո նաև այդ ծառը կչորացնի: Շատ տարօրինակ պատմություն է սա, բայց չեմ ուզում բոլորի ժամանակը չարաշահեմ: Շնորհակալություն, ուղղակի խնդրում եմ հարցն ուշադրության կենտրոնում պահել:

Հայկ Մարության

-Խնդրում եմ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանին և «Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանության» ՀՈԱԿ-ի տնօրեն Արա Աղայանին համատեղ զբաղվել այս հարցով, ուսումնասիրել և զեկուցել: Անելու ենք այնպես, ինչպես հարմար է համայնքին, որևէ մեկի շահը մեզ չի հետաքրքրում:

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեց՝ Ա. Եփրիկյան